

Զ Ա Ր Կ Ե Ա Ր Ի

Ք Ն Ա Ր Ը .

Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Ծ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Հ Ր Ս Ա Ր Ա Կ Ե Ց

Ա Ի Ա Գ Գ Ր Ի Գ Ո Ր Ե Ա Ն Ց :

Բանաստեղծներ շատ հայ,
Խօսքն զին ունի,
Չարկեարն անդին ա,
Նորան զին չունի:
Մ Ա Յ Ի Ց :

Ա Շ Խ Ա Տ Ո Ւ Թ Ի Ի Ն Թ .

Բ Ա Գ Ո Ւ

Հ Ա Յ Ո Ց Մ Ա Ր Դ Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն Ը Ն Կ Ե Ր Ո Ւ Թ Ե Ա Ն Ց Գ Ա Ր Ա Ն

1879,



Ժ. Կ

ԿԵՆԿ

II

Дозволено Цензурою. Тифлисъ. 3 апрѣля 1879 г.

ДИРА
ЗАРГАРА.

ПОЭЗИИ

ИЗДАНИЕ

Авака Григорьева.

Произведение 9-е.

БАКУ.

Типографія Армянскаго Человѣколюбиваго Общества.

1879.

WPA

WPA

WPA

WPA

WPA

WPA

WPA

WPA

Մեծապատիւ պարոն

ՍԱՄՈՒԷԼ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ԲԱՂԻՐԵԱՆՑԻՆ

ԽՈՆԱՐՀԱՐԱՐ ՆՈՒԻՐՈՒՄԷ

Հ Բ Ա Յ Ա Ր Ա Կ Ի Ջ Ը :

ՄԵԵԱՊՈՏԻ ՊՐՈՆՆ-

Այս գիրքը, որ ես հրատարակում եմ, Ձեր համա-
քաղաքացուն է եւ Ձեր բանաստեղծինը: Յուսալով, որ
քաղցր կլինի Ձեզ համար կարգալ սորան եւ ուրախանալ,
իրբեւ հայրենակից, այս առիթով անս ամենայն յարգան-
քով մատուցանում եմ սորան Ձեզ, խնդրելով Ձեր ներու-
ղամտութիւնը:

Ձեր Մեծապատուութեանը

Խոնարհ ծառայ

Աւագ Գրիգորեանց:

ՅԱՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ.

Հրատարակելով ներկայ „Չարկեարի Քնարը“ վերնագրով բանաստեղծութիւնները, իմ նպատակն էր, որ կարողանայի նախ՝ սորա հրատարակութիւնից ստացած օգուտի մի մասով մի հասարակ գերեզմանաքար դնել հանգուցեալ Չարկեարի վերայ, նորա յիշատակը պատուելու և չը կորցնելու համար, և երկրորդ՝ մնացած մասը տալ նորա որբ և թշուառ օրիորդին ուսում և կրթութիւն ստանալու, յիշելով յայտնի Բօկի խօսքը՝ „տուէ՛ք մեզ բարի մայրեր, և մենք կունենանք լաւագոյն մարդիկ,“:

Եթէ այս փոքր աշխատութեամբ ես կարողացայ պատճառ դառնալ Չարկեարի որբ օրիորդի գոնէ սկզբնական կրթութեանը, որ նոյնքան անհրաժեշտ է կեանքի մէջ, այն ժամանակ ինձ պատիւ համարած կը լինեմ, որ մասամբ կատարած տեսայ իմ պարտաւորութիւնը:

Ա.—ադ Գրիգորեանց:

1879 թ. 6 յունվարի,

Բագու:

BRUNNEN 201

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mirrored and difficult to decipher.

W

Handwritten signature or name in blue ink.

1878 R. G. ...

...

ԶԱՐԿԵԱՐԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ.

Հայ հասարակութեանը նուիրումեմ և մի գիրք, որի լոյս տեսնելուն պատճառ տուեց իմ «Սոխակ Հայաստանի» վերնադրով ազդային լեհաստար երգարանի հրատարակութիւնը: Արդարեւ, այդ ձեռագիրը կարող էր մի օր անհետանալ, կորչել և, վերջապէս, փոշի դառնալ առանց հասարակութեան զիտութեան՝ եթէ բարի մարդիկ չ'ընչեցնէին ինձ այդ հեղինակութեան մասին՝ հէնց իմ «Սոխակի» առաջին հատորի հրատարակութեան սկզբից:

Ընթերցողը, կարդալով այս գիրքը, որին ես անուանել եմ «ԶԱՐԿԵԱՐԻ ՔՆԱՐՐ», գուցէ կհարցնի. ո՞վ է Չարկեարը: Այդ հարցին բաւականութիւն տալու համար պատասխանումեմ: — Չարկեարը (Աբրահամ Մարտիրոսեան Բաբայեանց) Շամախեցի է և ծնված 1824 թուին: Սա իրա «նամակ» բանաստեղծութեան մէջ այսպէս է ասում.

«Նա'մակ, ես Չարկեարն եմ, կեանքս ծախեցի,
Անուես Աբրահամ, բուն Շամախեցի:»

Սորա հայրը Մարտիրոս Բաբայեանն է, որ այն ժամանակ պարապելիս է լինում ոսկերչութեամբ (չարկեարութեամբ) և որը, ինչպէս պատմումեն, բանաստեղծ է լինում: Սա, նայելով իրա միայնակութեան, վերցնում է փոքրիկ Աբրահամին իրա խանութը, իբրև օգնական և փոքրաւոր, և սովորեցնում է իրա արուեստը: Պատմումեն, որ սոքա—հայր ու որդին երեկոները խանութից վերադարձած ժամանակ, ընթրիքից յետոյ, վերցնում էին դահլիճն (դափը, դաւալը) և տաճկերէն երգեր ասում ինքնաստեղծութեամբ: Մարտիրոս Բաբայեանն այսպիսի

փորձերի մէջ տեսնելով Աբրահամի ընդունակութիւնը՝ տալիս է նորան Շամախու զաւառական դպրոցը (Уѣздное училище) 1842 թուին: Աբրահամը սովորում է այստեղ առաջին և երկրորդ դասարանների մէջ երկու տարի միայն, և այնուհետև թողնում է դպրոցը սնային հանգամանքների պատճառով:

Աբրահամի ուսանողական կեանքից այսպէս է պատմում նորա դասաընկերներից պ. Սարգիս Վարշամեանցը. «Աբրահամը, իբրև աղքատ տան զաւակ, երբեմն դասադրքեր չէր ունենում և շատ անգամ էլ կարդին և շարունակ չէր յաճախում դպրոց: Բայց երբ դպրոց էր գալիս Աբրահամը, նա խփոյն սուբա, նորա դասագիրքը ինդրում կամ խլում էր և մի երկու անգամ կրկնելով նոր կամ անցեալ թողած դասերը, ամենից լաւ և գոհացուցիչ դաս պատասխանողն էր լինում: Նոյնպէս, երբ կրօնի վարժապետ Առաքել Բէշարայով Ալամդարեանի Բրիտանականի վերայ դասեր է տալիս լինում աշակերտներին անդիր անելու, զժրադպարար, Աբրահամը այդ դրքից չէ ունենում: Եւ երբ վարժապետը, իրա սովորութեան համաձայն, դասը փոքր աշակերտներից սկսելով մեծովն էր վերջացնում, այսպէս էլ Աբրահամը, իբրև մեծ և առաջին աշակերտը, խոր ուշադրութեամբ լսելով ամեն մի աշակերտի պատասխանին, և հիւթը իրան հասնելով՝ դեղեցիկ կերպով կրկնում էր նոյն օրվայ դասը: Աբրահամի այդ մեծ սրամտութեան վերայ զարմացած էին թէ ուսուցիչները և թէ աշակերտները:»

Ահա՛ ինչ է ասում Աբրահամը իրա մասին.

«Ո՛չ քերականութիւն գիտեմ, ո՛չ անսխալ գրութիւն, իմ բանաստեղծութիւնս է միմիայն մտաց սրութիւն:»

Աբրահամը, դպրոցից դուրս գալուց յետոյ, մի հաստապարտապաննք չէ ունենում: Նա այդ ժամանակ սկսում է երգեր և բանաստեղծութիւններ գրել Աբրահամ ստորագրութեամբ, որոնցից մի երկուսը հագել կարողացայ ձեռք բերել: Աբրահամը

փորձվելով բանաստեղծութեան մէջ, մեծ հեղինակութիւն և ձայն է ունենում Շամախում, իբրև բանաստեղծ, Նորա անվախ, ազատ, սուր և կարուկ սասանների և պատասխանների մասին ժողովուրդը պատվում է նորան, Ղ ու զ ու զ (կատարել) մականունը տալով: Այժմ էլ Շամախեցիների մեծամասնութիւնը նորան «Ղուզուզ Աբրահամ» անունով է ճանաչում: Աբրահամի մասին այսպէս է գրում Շամախուց մեծ պ. Սահակ Գուրգէնեանցը:— «Շամախում, 1847 թուից, Աբրահամը մեծ նշանակութիւն ունեցաւ և տաճիկ ազնուականների մէջ, Նորան կ'հրաւիրէին հարսանիքներ, ընթրիքներ և հացկերութիւններ, կ'հրաւիրէին և տաճիկ բանաստեղծներ, որոնք տխուր պլիպտոյի առաջ նստած՝ երկար խօսակցութիւն կանէին և յաղթութիւնը միշտ Աբրահամի կողմը կ'լինէր: Սոցանում կար օրէնք, թէ որ բանաստեղծի մէկը սկսէր խօսելու թէ՛ «որ երկից տեսել եմ զեղեցիկ նաղելի, ինքն բարի, հոգին բարի, սիրով լի,⁴ միւսը պէտքէ խօսքերի վերջաւորութիւնը նմանացնէր նախ սկսողի վերջաբառին և այնպէս շարունակէին խօսքերը: Բանաստեղծը յաղթվումէր, թէ որ չէր կարողանում որոնել մի այնպիսի վերջաբառ, որով կնքէր իւր երգը: 1848 թ., աւելյացնումէ պ. Գուրգէնեանցը, Մխկին-Բուրջի ասված բանաստեղծը դաշխ է Շամախի. ես ականատես էի Աբրահամի և տաճիկ բանաստեղծների խօսակցութեան, ուր Բուրջին բերանը անգամ չկարողացաւ բանալ: Սա կարապետ Սերբրակովի հարսանիքումն էր:⁴

Աբրահամը, ինչպէս ասումեն, տաճիկ գրականութեան հետ ծանօթ էր և տաճիկների մէջ զովվումէր իբրև բարձր բանաստեղծ. այդ պատճառով նա միշտ մեծ մեծ ընծաներ է ստացել նոցանից: Այդ մասին նա ասումէ.

«Ես տաճիկերէն հազ գրելուս՝ շատ ընծաներ եմ ստացել, Բոլոր Շամախին վկայ է, որ նեղութիւն չեմ հասկացել:»

Տաճիկը համակրել է հայ բանաստեղծին, ուրախացրել է նորան իրա ընծայով և կարեկցել նորա թշուառութեանը, իսկ Հա՛յր Այս կէտերին ահա այսպէս է պատասխանում Աբրահամը.

«Հայրենեաց սէրն զգալով՝ այն օգտից ձեռ եմ լուացել,
Հայերից ինձ օգտող չկայ, նեղութեան մէջ եմ քնացել:»

Աբրահամը 1855 թուին գնումէ Լանքարան և այնտեղ պարագումէ ոսկերչութեամբ: Այստեղ Աբրահամը նորից բարեկամանում է պ. Մայիճի (Յարութիւն Աղեքսանդրեանցի) հետ:

Աբրահամը Լանքարանում ամուսնանումէ, որին խաչեղբայր է լինում Մայիճը և ապա նորա մանուկներին կնքահայր, իրա Սերովբէ որդուն այդ պաշտօնը յանձնելով: 1864 թուի յունվարի 12-ին Աստուած Աբրահամին պարգևումէ մի արու գաւառ, որին կոչում են Ռաֆայէլ: Այդ առիթով նա մի երգ է գրում իրա նորածին մանուկի վերայ «Օրօրօցի երգ» վերնագրով և նորա մի տան մէջ այսպէս է ասում.

«Մայիճի Սերովբէն քեզի կնքաւոր,
Պսակդ տեսնալին էլաճ ուխտաւոր,
Աստուած քեզի նորա հետ պահի բախտաւոր,
Դէ՛հ, ննջիր, հոգեակս, ասումեմ լա՛յ, լա՛յ:»

Այստեղ Աբրահամը մի առ ժամանակ ոսկերչութեամբ պարագալիով տեսնումէ, որ սորանով չի կարողանում իրա ընտանեկան պահանջներին բաւականութիւն տալ, թողնումէ նորան և քնում՝ վեղը ծուռ: Այս դառը ժամին Մայիճը վերցնումէ Աբրահամին և նորա ընտանիքին իրա հովանաւորութեան տակ և պահպանումէ: Այդ ժամանակ Աբրահամը, Մայիճի առաջարկութեամբ և յորդորանքով երգեր է գրում Զարկեայ մահանունով և, իբրև երախտագիտական անմուսնալի յիշատակ,

իրա երգերի մէջ յիշումէ իրա բարերար ՄայիՖին զեղեցիկ
զղացմունքներով: Ահա՛ նորանցից մի երկուսը.

նես միշտ ՄայիՖիս տանը

Լի եմ տեսել սեղանը.

Իրա հացի դուշմանը

Մէնակ չի մտել օթաղ:՝

Մի ուրիշ տեղ.

«Պահպանումէ ՄայիՖի խրատն ինձ,

Եթէ ո՛չ՝ վաղ պիտէր վերջանալս իմ՝»

Չարմանալի իրողութիւն է, որ ՄայիՖը իրա կոյր աչքերով
տեսաւ Աբրահամին, վերցրեց նորան իրա խնամատարութեան
տակ և իրա համեստ աշխատանքով պահպանեց նորա ընտա-
նիքին, իսկ մեր աչքաբաց հարուստները, ձայն և նշանակու-
թիւն ունեցող Հայերը չտեսան նորան և չօգնեցին նորա խա-
չած ձեռքերին: Մի՞թէ կարեկցութիւնը, ընկերասիրութիւնը,
քաջալերութիւնը, բարոյական և նիւթական օժանդակութիւնը
ՄայիՖներին է տուած, իսկ աչքաբաց հարուստներին ո՞չ:
Մի՞թէ մարդկութեան ազնիւ յատկանիշները միայն ՄայիՖներ-
րի մէջ պէտքէ փայլել, իսկ նոցանից դուրս երբէ՞ք . . . Այդ
մասին շատ յարմար է ասում հոգեակ Աբրահամը.

«Ձարկեա՛ր, ՄայիՖին տեսնո՞ւմես, որ կարօտ է աչաց լուսոյ,
Վարուք, բարուք բարի անուամբ շատ տեսանողաց աղէն է:»

Աբրահամի հանձարը, ընդունակութիւնը, զխտութիւնը
խմելու ժամանակ է երևացել: Նորա զուխը երբ տաքացած է
եղել զինխով կամ օղիով՝ նա բանաստեղծ է եղել այս բառի
բուն նշանակութեամբ, իսկ երբ ո՛չ՝ ոչինչ զբօս նս այդ միջո-
ցին ներկայ չեմ եղել նորան և, ուրեմն, երաշխաւորել նոյն-

...auf dem ...
...auf dem ...
...auf dem ...

...auf dem ...
...auf dem ...
...auf dem ...

...auf dem ...
...auf dem ...
...auf dem ...

...auf dem ...

I.

Արդար գատաւոր, դու հասի՛ր, ինձ անապատտան մի՛ թողիր,
Տմարդ անձանց վիզըս թեքել՝ մինչի օրն մահուան մի՛թողիր,
Անիրաւ գատաւորների ձեռին գատաստան մի՛ թողիր,
Չարաժողով զաւաճանաց կամքն միաբան մի՛ թողիր,
Սուրբ սիրով վառեալ սրտերն կարօտ ու բաժան մի՛ թողիր:

Մինչի ե՞րբ պիտի մեր ծառերի պտուղն այլքն ճաշակեն,
Իրանք մտնեն ներս համարձակ, մենք զնալուս դուռն փակեն,
Մի՛թէ մեր ազգին չի տուած նաճուս անուանեալ բաժակէն.
Հայրն ի՞նչ պիտի սպասի մեզ պէս կամակոր զաւակէն,
Մո՛րվա՞թ է այլոց կարագ տուր, քո տան համար թան մի՛ թողիր:

Զարմանումեմ, Հայ անուոնն մենք ի՞նչով ենք սփականել,
Որ մեզի որք կանանց նման օթեանից դուրս են հանել,
Ոմանք ՚ի փառս աշխարհի՛ այլոց հեռ են միարանել.
Ո՞րտեղից ճարնեք պղպհոց, ինչպէս Վարդան, ինչպէս Գնէլ.
Տէ՛ր, նորանց հոգիքն կարօտ քո արքայութեան մի՛ թողիր:

Մի՛թէ մարդկութեան նշան է օտար փառօք պարծնալն,
Այլոց պատրն ամրացնելով՝ սփականն ձեռաց տալն,
Եթէ կասենք անգլուխ ենք՝ նիրելի է այս սխալն,
Ո՞նց թաղցնենք անմիաբան պտղի համն չի զգալն.
Գոնհայ կրկին մարդեղութեամբ մեզի անխնամ մի՛ թողիր:

Կասկածանօք հայհոյեցի, տո՛ւր իմ մեղացս թողու թիւն,
 Ղուսաւորեա՛ սիրտքն իշխանաց, նա է կրկին մարդեղութիւն,
 Մատթէոս սուրբ Հայրապետ(1) այժմեան կամքին կարողութիւն,
 Որ երևի Ազգի միջին օր ըստ օրէ սէր, ուղղութիւն,
 Քեզ է արեւ սրտի յոյսն, դու Նորան փոշման մի՛ թողիր,

Ձի մեռնողն Ազգի համար՝ այնպէս է կարծում մահ չունի,
 Շուտ զնայ այնպէս իշխանն՝ որ իրա ազգին շահ չունի,
 Մայիճի 2) պէս աչքիցն կոյր՝ ձեռին ազգային ջահ չունի.
 Կասնի թէ յայտնախօս կլլի՛ սլ որ ոչ ովից ահ չունի.
 Ջարիէ՛ար, լեղուղ կարճ մի՛ պահիր, կամ սրտու մէջ բան մի՛ թողիր:

2.

Աստուած սէր է և միշտ տէր է:

Արդեօք, սէրն ո՞նց թարգմանում, որ ամենայն մարդ հասկանայ,
 Սիրոյ համէն քաղցրանալով՝ իւր ընկերին սիրել ջանայ,
 Չէ՛ թէ Հայր ու որդի հողին սուրբ սիրով պիտի միանայ,
 Միասէր Աշամ ստեղծան՝ ասան սա մեզ սիրական ա,
 Սիրելի զրախտ ստեղծան, որ սէրն սիրով լիանայ,
 Սուրբ սիրոյն ընդդէմ կանգնելով՝ հրեշտակք դառան սատանայ:

1) Պարզ երեւում է, որ այս երգը հանդուցեալ Ջաբ կեարք գրած է հանդուցեալ Կառմէոս Կաթուղիկոսի Հայրապետութեան ժամանակ: Այժմեան Հայկական Վեհափառ Կաթուղիկոսն է Գ Ե Ո Ր Գ Չ Ո Ր Ր Ո Ր Գ:

2) Մայիֆը (Յարութիւն Աղէքսանդրեանցը) Չարկեարի խաչգրայրն է եւ նորա մանուկները կերտհայրը: Թէ ինչպէս են դորա բարեկամանում միմեանց հետ, իմ ինդրանաց համանայն, ահա այսպէս է գրում ինձ պ: Մայիֆը Ղանքարանից իրա կենսադրութեան հետ:— «Իս ծնուել եմ 1823 թուին Պարսկաստանի Թէհրանու դաւառի Ղարաղան գիւղում: Հայրս—Յովհաննէս (Գիան) Աղէքսանդրեանցը եղած է բանաստեղծ աշուղ եւ սաղով (քնարով) մանգալիս է եղել, ուր կամեցել է: Աղուղութիւնը մեզ սպազական մնացած է: 1855 թ. հօրեղայրս ինձ, մօրս, երկու քրոջս եւ մէկ եղորս հետ զաղթել (բռնել) է

Աէրն մեզ միշտ հարկաւոր է՝ եթէ մենք նորան սուրբ պահենք,
 Այլոց սիրելին տեսնելուս՝ չար ցանկութեամբ մենք չազահենք,
 Հողեր սէրից գողանանք՝ մարմնաւորին անչափ շահենք,
 Սոցա ամենն մոռացանք՝ մի՞թէ մահ չունենք, անմահ ենք,
 Լուսատու չենք, լուսառու ենք, մին ժամանակաւոր ջահ ենք,
 Չկայ այն յոյսն մեզանում, որ սուրբ սիրոյ դուռն բանայ:

Նախ սիրական Աստուածն ինքն է՝ որ միշտ պիտի նորան սիրենք,
 Գոնեայ վաքբ ինչ արժանանանք, որ նորա աշխարհին տիրենք,
 Մեր եղբոր սխալմունքներն սիրով պիտի մենք միշտ ներենք,
 Ատողներխ սէր ցոյց ապով՝ դէպի սէրութիւնն բերենք,
 Անսէրութեան պատճառաւն՝ մէկ զմէկուց զիշակեր ենք,
 Չկայ մէջներխ այնպէսն՝ որ այլոց վերան զարմանայ:

Աէր կայ սուրբ է, սէր կայ անսուրբ՝ սորանք երկուսն էլ մէկ սէր է,
 Սուրբ սէրն տեսնումենք այն մարդիցն, որ շատ ծեր է,
 Փոխարկում են ջահիլներն՝ պատճառ, ջահիլն անհամբեր է,
 Ում որ բնական սէր չունի՝ արդևօք նա էլ ինչի՞ տէր է,
 Անսէր մարդոյ ապրելիցն՝ մեռնելն աշխարհին խեր է,
 Ում սէր չունի, սեռ էլ չունի. նա ո՛չ մարդ է, ոչ հայրան ա:

Զա՛րէ՛ւար, սիրոյ քանդուածն ես, էլի դու սէրն զովումես,
 Սիրահար ես, ի՞նչ օրի ես, անսէր մարդկանց նգովումես,
 Մայի՛ճն քեզ խրատելուց՝ սուտ մահանով խռովումես,
 Սատանին էնքան ես սիրում, կասես թէ մտիկ զովումես,
 Կուշտ էլ լինես՝ հոտ ես քաշում, աննահախ հոգիդ պովումես,
 Թո՛ղ ամօթդ յանդիմանի՝ ում որ խղճմտանքն տանայ:

նոյն զիւրից Էանքարան: Յետոյ 1858 թ. դադմել ենք Շամսխի: 1842 թ. Շամսխում փոքր ժամանակ կարդալով, այլ եւս միջոցս չնրեց շարունակելու, այս պատճառով սոխյուրեցայ նոյն ժամանակվայ նորաշէն եկեղեցու վերայ մշակութիւն անել եւ ստացած վարժից ընթերցանութեան դրքեր առնել: Մի շարքով չափից դուրս ծանրակիր մշակութիւն անելով, աչքերս վնասուեցան դորա ներգործութիւնից եւ ապա կուրացան: Այդ իսկ օրից քս կրումնմ Մայի՛ճ անուր, որ պարսկերէն կոչվում է ԿՈՂ: Բայց որովհետեւ հարկա-

3.

Ով յոյս կապու աշխարհին, նա չի լրացրաւ
տարին.

Անիրաւ աշխարհն ինձի ատելով՝
Վերջումն հասցրաւ դառն վիճակին,

Անէջ կրակին.

Տեսամ միտքն նա է, որ նամարդ մարդկանց
ձամբին մատաղ անի, ինչպէս Սահակին,

Մտն եմ դանակին:

Աշխարհն բաղդի հետ խօսքն մին արաւ,
Խելօքնրին թողին քաղցած և ծարաւ,
Չ'ասի թէ ում ատաւ՝ նա խպառ կորաւ,
Վարդըն կու հնձի իւր ժամանակին

Եւ կունենայ զին:

Ով բաղդին հաւատի՝ նա խիստ անբախտ է,
Պատճառ, բախտն ինքնին շատ ապերախտ է,
Նորա զարդն մին անվայել դրախտ է,
Մին օր Ադամի պէս մերկ կանի մարդ, կին
Թզնւոյ տակին:

Եթէ ուզումես աշխարհին լսես,
Ում անից մին առնես՝ նորան ե'տ տուր կէս,

Եր էր մի որ եւ իցէ ապրուստի միջոց գտնել ինձ համար, ուստի հարկադրվեցի սազ ածել եւ աշուղութիւն անել, միայն առանց թափառելու: Լսելով Շամսխում Աբրահամ Մարտիրոսեանի բանաստեղծական համարը, փափականօր ցանկացայ տեսութիւն անել նորա հետ: Մի օր կանգնած մի զիննտան առաջ, տեսայ որ մի մարդ եկաւ եւ նստեց այնտեղ: Միեւնոյն Աբրահամից, ի հարկէ ես չըմանալով նորան, հարցրի թէ Աբրահամն ո՞վ է եւ որտեղ է բնակվում: Նա պատասխանեց մի քանի հետաքրքիր հարցերից յետոյ թէ. „հնչ ես

Եթէ որ կարանաս հէնց դիպի էլ ուտես՝
էն վախտ դու արժան ես նորա սենեակին,

Ոսկի բաժակին:

Խելօք մարդն բախտի աչքին է կրող,
Պատճառ, որ տուածն առնել չի կարող,
Ինչպէս պատահումէ մին դետին փորոց
Յանկարծ գտանումէ մին զանձ ահագին,

Թաղումէ կրկին:

Բախտն առաջ մարդկանց խելքն չսփումէ,
Ում որ յիմար տեսաւ՝ վերէն թափումէ,
Խելօքին հեծնելու՝ քացով խփումէ,
Նա լաւ է ճանաչում իւր աւանակին,

Անվարձ մշակին:

Ես ի՞նչ բանով պիտի աշխարհից վախեմ,
Նա ինձ նեղելով ես վարքս փոխեմ,
Եթէ անձար փնտի շապիկս ծախեմ՝
Պիտի մանդամ յիմար մարդկանց շալակին,

Բզեմ դժակին:

Չա՛րկեար, բախտի ձեռից կանչեցիր աման,
էն ա, որ բախտն քեզ թողաւ անթուման,
Արդե՞օք քո ընտրած Մայիֆէր նման
էլ ջան ասող կա՞յ լեզուիդ նուագին,

Փորձած առակի՛ն:

անուժ նորան, նա էլ ինձ նման մի մարդ է: Վերջապէս ես նորան յայտնեցի, որ ցանկանում եմ նորանից բանաստեղծութիւն սովորել: Նա պատասխանեց. «մի չաքէր զինի ան, ես նորա բանաստեղծութիւնից կը սովորեցնեմ, նա ինքն քաղաքումս չէ: Ես յօժարեցայ. առնելով զինի, սկսեցինք միմեանց կենաց խմել: Այս տեղ նա սկսեց իրա բանաստեղծութիւններէն տանկէրէն ասել, եւ ես նկատեցի, որ նա հէնց ինքը—Աբրահամ Մարտիրոսեանն էր: Ենդրեցի, որ ինձ աշակերտ ընդունէ, քայց նա, մերժելով ասաց, «իմ բնակու-

4.

Էջի անուան էշ է, յիմարն էշեց գէշ է.

Այն անցեալ գիշերն, տասնումէկ ժամին,
 Պարզ էր եղանակն, փշումէր քամին,
 Յանկարճ սարսափելի ձայն անխառտունն,
 Միրոս դողաւ, դնաց աչքիցս քունն,
 Ո՛չ փող էր, ո՛չ գունայ, ոչ թմբուկ, ո՛չ սաղ,
 Արդեօք սա ախտի՞ք է, թէ անտուտ հրա՞գ:
 Վախվըխելով կամաց վեր կացայ տեղէս,
 Կասես քար կայ կախած ամէն մէկ բեղէս,
 Տեսայ գօտն միջին մին սև աւանակ,
 Ականջներն գլած, կանդնել է մենակ.
 Երբ որ ինձ տեսաւ, կրկին բղաւաւ,
 Նորա գէշ ձայնիցըն զլուխս ցաւաւ,
 Ձեռս ընկաւ մէկ մեծ երկաթէ շամփուր,
 Այս անկանչ զոնաղին որքան կարաս տո՛ւր:
 Իմ ձեռս նեղացաւ, ջանս թուլացաւ,
 Նորա ձայնն քանի դնաց՝ զլլացաւ.
 Ասամ որդին մեռնի սկիզբ գընողիդ,
 Աստուած հօրն ողորմի անուն դնողիդ,
 Լաւ են անուանել քեզ, էշ ես, որ էշ ես,

Յեանս տեղը ես ինքս էլ չեմ իմանում. մէկ օր այստեղ եմ, միւս օրը այլ
 քաղաքում: Հանդուցեալ Աբրահամը, որին 1849 թուից թողել էի Շամախի,
 1855 թ. եկաւ Լանքարան եւ ածուանացաւ: Ես գտայ նորան խաչեղբայր եւ
 ապա նորա հրեխաներին կնքաւոր: Նայելով իմ աշոգութեանը, Աբրահամին վեր
 ապայ իմ նախնաւորութեան տակ եւ պահպանումի, Նորա երգերից, որ տրու-
 վումեն սիրուն եւ պատուական «Ս ք խ ա կ ի դ» միջոցաւ, իմ յորդորանքով
 է ժողովել նանդուցեալը եւ պահպանել: Նորա մահից յետոյ, նորա ընտանիքը

Անդգայ հայվան ես, զգուելի լէշ ես
 Յայնժամ անբան էշն, իբրև բանական,
 Ահա՛ տեսէք ինչպէս տուաւ պատասխան,
 Պէկպէտ ինձ ասումես էշ ես, որ էշ ես,
 Եթէ լաւ մտածես՝ ինձանկց զէշ ես
 Ես չեմ փոփոխում իմ հայրենեաց վարքն,
 Չեմ ընկնում մին ուրիշ հայվանաց շարքն,
 Մեզնի դուք բեռնումէք, խոտ էլ տալիս էք,
 Եթէ որ կորչում ենք՝ ման էլ գալիս էք,
 Մենք ձեր էշն ենք իլէլ՝ դուք տէրտէրների,
 Մենք ժամանակաւոր, դուք միշտ էք գերի
 Նորանք զիշեր ցերեկ ձեզ բեռնում են,
 Ի տեղի խոտ տալոյ՝ փող էլ առնում են,
 Այ ձեզի քորում են, ոչ ջուր են տալիս,
 Եթէ կորչում էք՝ ման էլ չեն գալիս,
 Ինչ որ աշխատում էք նորանց փորումն է,
 Երբէք չե կրելի, անտակ հորումն է,
 Տուններդ քանդվելոյ, դուք չէ՛ք հասկանում,
 Մենք անբան էշ գողով՝ ձեզ ծաղր ենք անում,
 Հինդ նաւակատկին անում է պաշտում,
 Ամենէն մէկ մանկթ չառած՝ չի հաշտում,
 Եթէ որ պատահաւ՝ մատոյց պատարագ,
 Տասնից պակաս մի՛ տալ, կանես սրտաճաք.
 Մեկնիս տո՛ւր, կնքվելիս տուր, քաշվե ջուր,
 Փորք տաս կանի՛ծի, տունդ կընկնի հօր:

Վինն, երկու աղջիկը իմ հովանաւորութեան տակ են եղած մինչև 1873 թիւ.
 Իսկ նորանից յետոյ կառավարումէ նորանց հանդուցեալի կնոջ եղբայրը:
 1850 թուից մինչև այժմ—1879 թիւ, ես Լամբարանում պարսպում եմ կոյր
 աչքերովս զանազան առեւտուրով եւ հիմա էլ բնակութիւնս այս բաղարումն է:.,

Զարմանալի է պ. Մայիֆի գործակատարութիւնը վաճառականութեան մէջ:
 Նա ամեն մի տեսակ արծաթադրամ եւ թղթադրամ շօշափեղով, շատ ժիրու-
 թեամբ ճանաչումէ թէ նորա ինչ արժէք ունեցող դրամներ են: Նա ամեն մի

Տօն օր է, տո՛ւր, պսակ է՝ տուր, մեռաւ՝ տուր,
 Երեխայ՝ տուր, չափահաս՝ տուր, պառաւ՝ տուր:
 Որտեղ տեսնես ոսկով զուգված մին տիկին,
 Իմացիր որ կուլինի նա տէրտէրակին:
 Եթէ քարոզ ուզար՝ նա անպատրաստ է,
 Եթէ մէկ մարդ մեռաւ՝ դործին զգաստ է:
 Ոչ թէ քահանայքն ամենն են այդպէս,
 Շատ կան տուրք քահանայք Աստուծոյ անտես,
 Ամենայն մարդ պիտի խօսալ տեսածըն,
 Ածական է խօսողներից լըսածըն:
 Ահա տեսար, ով մարդ, որ դու ես էշն,
 Քեզանից խելօք են կզն ու գոմէշն,
 Կայօր Սողոմօնից մնաց մին նզովք,
 Յորժամ, որ նա արար անբանից ժողովք,
 Մեր ազգն արգ արին, ասան շատ լաւ կնք,
 Ափսոս; անասնոց մէջն ողջից սակաւ ենք:
 Սողոմօնն նորանց տուաւ պատասխան,
 Ասաւ՝ ահա ձեզի յայտնեմ խելօք բան:
 Ձեր ազգն ստեղծված է երկու տեսակի,
 Մին տեսակն չունի պոչն քամակի,
 Գուք չորս ոտանցի էք, ականջներդ ձիդ,
 Նորանք երկու ոտով ման են դալի զիդ,
 Նորանք մարդակերպ են, մարդկանց հետ խառն,
 Բայց նոցա վիճակն անչափ է դառն:

առեւտրական գործ կատարում է շատ ճշդութեամբ: Պ. Մայիֆը որովհետեւ,
 իրա բուն նշանակութեամբ, ոչինչ չէ տեսնում, այդ պատճառաւ նա իրա
 զգացմունքները—երգերը, բանաստեղծութիւնները ուրիշներին է թելադրում
 գրելու համար: Չարմանալի է նոյնպէս նորա մտքի սրութիւնը՝ Նա այնպէս է
 թելադրում իրա ոտանաւորները, որպէս թէ զրբից բերան արած լինի. Այդ ևս
 Նկատել եմ քանի մի անգամ, երբ նա Բագու եկած ժամանակ շնորհ էր բե-
 բում ինձ մօտ այցելութեան: Նա ունի ոսկեայ ժամացոյց զանգակով որի

Զուխէն թէ փալանն երկուսն էլ շոր է,
 Մարդումն մարդկութիւն միշտ հարկաւոր է,
 Մենք մեր հայրենական լիզուան ենք զուսմ,
 Բայց դուք ձեր հայրենեաց լիզուն էք ծռում,
 Շատ կան ձեր միջումն մարդիք միրքաւոր,
 Իրանք Հայ են, սիրեն խօսալ թուրքաւոր.
 Նա այնպէս է կարծում մարդ է կամ Հայ է,
 Այնպէս մարդն պահաս, ո՛չ թէ մեր թայ է.
 Եթէ մին պատասխան ունես, տուր, ով մարդ,
 Եթէ չունես՝ կասեմ՝ չօռ ու ցաւ ու դարդո՞:
 Էջն ոչ խօսող է, ոչ մարդ խրատող,
 Բայց իմացէ՛ք, մարդ չէ ամեն հաց ուտող:
 Ինչ մարդ ՚ի մանկութեան չ՛առաւ ուսումն,
 Ծեր վախտին կուտեսնէք քեանդիր ուսումն.
 Եթէ արջ պարացնողն արջից զխտուն է,
 Ինչո՞ւ մարդավարի մին արհեստ չունէ.
 Ինչ աշակերտ որ միշտ կարդալից փախաւ,
 Չափահաս դառնալուս շամբալուդ ծախաւ.
 Կարող եմ մարդ ասել ես իմ Մայիճի՛ն,
 Անօգուտ իշխանաց թող կայնի քէ՛Յին:
 Զարի՛սար, դու էլ եթէ ուսեալ լինէիր՝
 Հոգիդ չէիր ծախել, մարմին զնէիր.
 Հիմիկ դու իլար այն մօլլին հմանող,
 Ինքդ այն բանն անող, այլոց խրատող.
 Քառասունից մօտ ես, մինչի ցայժմ, Չարկեար,
 Կայքդ է մէկ չարքուճ, մէկ փոքս, մէկ փարկեար:

գարիից նա իմանում է թէ քանի ժամէ: Նա անցեալ Թուի Սեպտեմբեր ամսին Լանբարանից դալու ժամանակ իրա ոսկի մատանին շոյենաւում պատահմամբ կորցրել էր եւ դորա պատճառով նա ինձ մօտ մի երգ ասաց «Բաղդ» վերնագրով:

Պ. Մայիճի երգերից տպված են „Ս ո ի ս կ Հ ա յ ա ս տ ա ն ի ի»
 IV հատորի մէջ, որոնցից մինը, որ վերաբերում է Չարկեարին, տպեցի գրքիս
 վերջում, յաւելուածքի մէջ: Ա. Գրիգորեանց:

5.

Գեղեցիկ դէմքն լաւ է, մարդկանց համար
մեծ ցաւ է:

Աշխարհիս երեսին մին քեզի պէսն եարար ճարել կուլինի՞,
Նազով հոգէառ,
Մարմինս խոշեցիր, օղին քաշեցիր, քո էշխիդ կրակն է
անշէջ մշտավառ:

Մին փիքը չես անում, է՞ր ես սպանում,
Ես ին՞չ մեղք եմ անում, ո՞վ սիրուն խանում,
Իզուր ես զարմանում որ չեմ ղիմանում,
Թողել ես զնդանում, չես գալիս հանում,
Զհայ քո բերանում ազատ անուն բառ:

Ունքերիդ կամարն, աչքիդ խումարն
Կտրելայ իմ ճարն, սրտիս դադարն,
Քցաւ վերջի քարն, տարաւ դումարն,
Թէ կիլնես իմ եարն, կուգեմ աշխարհն,
Ես մեղաւոր չարն, դու ես արդարն,
Թող բացվի բահարն, երևիս պայծառ:

Ես ճարն կտրած եմ, բաս ին՞չ հող ածեմ,
Բեր նուներդ կտրեմ, ջուրն էլ ծծեմ,
Պատճառ, վաղուց է, ես շատ քաղցած եմ,
Քրտինքովդ ինձ օծեմ, որ խոստացած եմ,
Յանկարծ պատահած եմ, սրտով սիրած եմ,
Քեզ մօտ ի՞նչ մտածեմ, ո՞վ հողեղէն ձառ:

Զի թողիլ այնքան հալ, կարամ բան խօսալ,
Այդքան փիքը ու խիալ խղճալոյս մի՛ տալ,
Թէ՛ պէտ չեմ անսխալ, կարամ պարծենալ,
Կամիս տասանորդ տալ, ինձ է իսկ հալալ,
Ինքն անկար սև խալ, դափն ձերմակալ,

Արժան ես բարձրանալ դու փառաց 'ի փառ:

Եթէ Մայրն լսեմ, պիտի չի խօսեմ,
Մեղաց Աստուծոյ ասեմ, ես ինձ վնասեմ,
Բեր ծամերդ հիւսեմ, երեսիս քսեմ,
Քեզ մօտ պարզ երես եմ, հրեշտակաց պէս եմ,
Թո'ղ ինձ ասեն փիս եմ, ինչ որ կամ էս եմ,
Եթէ Զարկեարը ես եմ, շատ բանատես եմ,
Սկսի՛ր, սկսեմ. ես դաւալ, դու թառ:

Ե

**Մի փախչիլ աշխարհիցն, մեղք չի ծնիլ
քարիցն:**

Ագամ պապիս թողը ես եմ, ոչ թէ սարի ճգնաւորն,
Նման չլինի պի՞ճ կասեն, ովքը իրա հօրն ու մօրն:

Պապս ի սերն Եւայի, ցանկալի դրախտն ծախաւ,
Բռնաւ խանութի կռնիցը՝ կանանչ թուղի տալն փախաւ,
Թէպէտ նա յետ մեղանչելոյն ա'խ քաշաւ ու դիւնչն մխաւ,
Զարմա՛ք չէ որ կամ զործուձէ կամ փոշխմանում յանցաւորն:

Սկիզբ մեղքն աշխարհ անկաւ, կասեն թէ, նորանց ջուխտիցն,
Ելլի Ագամ չէր զանդատում իրա անվայել բախտիցն,
Քաշան վզակիթին տալով մերկ դուրս արին դրախտիցն,
Մարդ ու կին խելք խելքի տուին, յօրինեցին հայն ու շորն:

Մէկ մարդոյ պապն որ լինի մէկ Եւայի ձեռին զերի,
Այժմ Եւայք բազմացել են, նորանց թողն ո՞նց համբերի.
Պապի ներող ողորմածն, պիտի որ թողանցն էլ ների,
Ուզումն անմեղ երեւալ քարի մէջի կեղծաւորն:

Ինչո՞ւ ես փախչում աշխարհից, ճգնո՞ւ թիւնն անում մահանայ,
Թէ լաւ մարդ ես, տե՛ս, համբերի՛ր, ասեմ խղճմտանքդ տանայ,

Կորեկի հայն չես սիրում, ուզումես ուտես մանանայ,
Աշխարհումն ասել չես կարալ մարմնաւոր կրանութիւնն:

Ի մէջ կոստախօսութեանս բաներ շատ կան միաքըն բարակ
Չեն ասիլ թէ պատ եմ պահում, որտեղ չ'լինի միս կամ կարագ,
Անհամբեր ես աշխարհի մէջ, վսխումես իլնես խայտառակ,
Բնութիւնդ մէկ ցած ցաւ է, քեզ ձղելայ սարն ու ձորն:

Դու վարդապետ ես, ես ռամիկ, դու սարումն ես, ես աշխարհում,
Ղալբ ընկեր ես, որ փախել ես, քեզ անդ էլ ինձ են շարչարում,
Եթէ սրբակաց էլ իլնես, ես քեզի մարդ չեմ համարում,
Չեռս ընկիր կուշտ ծեծեմ քեզի յուզայ ուրբաթ օրն:

Զարկեալ, քո անդադար լեզուդ մարմնոյդ դաւաճան իմացիր,
Ծածկեալն յայտնի չեն խօսիլ, բանի մէջից բան իմացիր,
Մայիքն մի՛ տուր նեղութիւն, մարդոյ աստիճան իմացիր,
Խր խոսաման հաստատ պիտի ամեն բանի ուխտաւորն:

Յ.

Խօսակցութիւն մարդոյ ընդ աղաւնոյ.

Աղաւնի, ի՛նչ լաւ թռչուն ես, մին արու ես, մին էգ ունես,
Նա քեզ է սիրում, դու նորան, էլ մին ուրիշ հոգս չունես:

Դու սրբոյ հոգւոյն նման ես, քննողի համար մեծ բան ես,
Եթէ ընկերդ մեռանի՝ դու բոլոր տարի սուգ կանես:

Ուզումեմ քեզ ասեմ ցաւս, ինձ տաղելայ իմ էգ հաւս,
Ես մէկին սիրահարված եմ՝ օրն մին է, հինգ է դաւս:

Առաջուց ինքն սիրել ա, ձեռիս կլածն կերել ա,
Ճիմիկ որ ես գարտակվել եմ, սէրը սրտիցն քերել ա:

Առաջ կասեր իմն դու ես, առանց քեզ կ'լինեմ բու ես,
Ես քեզանով եմ կենդանի, դու ինձ համար կենսատու ես:

Առանց քեզ օրս չ'լինի, դուստրն հօրս չ'լինի,
Քեզ ունենամ, թող մուրանամ, հագնելոյ շորս չ'լինի:՝

Այս տեսակի ինձ խաբեց, ինչ ունէի՝ առաւ լափեց,
Աղքատանալս հասկացաւ, դուրդ դուրանին գլխիս թափեց:

Մին օր ասաւ յինչ կեղտոտ ես, անբան ու անձեռն ու սո ես
Վախուամ փոխվեմ քեզանից, ասումեն, դու փիա քոսոտ ես:

Դու ծեր ես, ես մատղաշ ջահել, ինչո՞վ պիտեմ սիրտս շահել
Տեսնումեմ բանդ պահաս է, դու չես կարալ ինձի պահել:

Նայումէր երեսից ծուռն, ասելով յչի դաս այս դուռն,
Եթէ ոչ՝ կանեմ խայտառակ, զբաղ կու դնեմ աբուռն ր:

Ասամ սիրական, երա՞ց է, դուցէ՛ սա էլ մին ջոկ նա՞ց է,
Սիրահարիդ ինչ ես ասում, ճշմարի՞տ է, թէ անա՞ց է:

Անցեալ տարուան սերայայ, մի՞թէ այդպէս շուտ ծերացայ,
Մոցումդ պահածն ես եմ, կեղտոտներին ընկերացայ:

Չուրկ պահեցի իմ խիզանն, լքցրի նորանց դագանն,
Վերջն տուեց ինձ դուրս քցաւ, ինչպէս տանից չար գազանն:

Իմ առածներս հագնումէ, մին վիզը հաստի պաղնումէ,
Սէքի թշնամին եմ գառել, ինձ տեսնելուս թագնումէ:

Աղանին ասաւ. ո՞վ յիմար, տավար ես, ոչ թէ սիրահար,
Նա մին այնպէս անտակ ծով է, նաւեր է բաթփիշել հազար:

Մի՞թէ լիրբն քեզ սիրող է, նորա կարօտանքն փող է,
Ածելն սրած ծոցումն՝ օրն մին գլուխ պափրող է:

Այն օր Մայիկէց թաքուն, գնացելէր մտել փաքուն,
Մարմնոյ արժինն կերել ես, հիմիկ ձեռ ես ձգել հոգուն:

Չարիւտայ, տեսել ես քիչ ու շատ, խրատվել ես դու մին կիսատ,
Եթէ հաւատամ քարանամ, սեխն սապոն, խեխն խրատ:

Տ.

Յաղագս աշխարհի.

Աշխարհ, քո սիրած մարդիքն զի՛ք շրջումեն կարմիր օրում,
Աչքիցդ ընկած մարդիքն ցիր ու ցան են սարում, ձորում:

Տոլլաթը տուր էշերին, հագուստը տուր զէշերին,
Ծունր են դնում փէշերին, էշը էշն պարաք է քորում:

Աննամուսը քո որդին է, խօսքըդ նորա հեա մին է,
Կայքն յիմարի ինչի՞ն է, քեզ համար է պահում հորում:

Գիտեմ, դու աշխարհ չես, փող ես, ժամանակաւոր խարող ես,
Եթէ ձեռնարաց տուող ես, ինձի է՞ր չես պարտաւորում:

Աչքդ մենակ ես եմ հանել, տեղն կարմիր Ֆիլֆիլ ցանել:
Կամուձես շուտով սպանել, խողի պէս դեպինն ես փորում,

Զարկեալն Մայիքն սիրաւ, այլքան նեղութեան համբերաւ,
Զուննալուս չոր հաց կերաւ, ման եկաւ հասարակ շորում:

Ծ.

Ասացեալ 'ի վերայ ազահ մարդոյ.

Անցեալ օրն ինձ տարան ազահի տունն դոնաղ,
Օրն ուտիս կիւրակի, կերակուրն էր սպանաղ:

Մինչի չայի եփ դալն՝ նա փոշմանաւ չայ տալն,
Սուդ փոխարկաւ ցնծալն, նստաւ ըէյքէ՛Յ սնտամաղ:

Որդոյ վերէն բարկացաւ, կովկով սեղան քցաւ,
Շատ խմողեց բան բացաւ, վերջումն շինաւ դաբաղ:

Դանակներն սուր բերաւ, տես ի՞նչ կերակուր բերաւ,
Խամ բողբաշի ջուր բերաւ, բայց դաւաթն զառվարաղ:

Իրան քարոզ կարդալն, փիս կնոջ մրթմըրթալն
շամբրում էր զգալն, սրտի մէջ ասում աւաղ:

Բերաւ մին աման փլաւ, անուեր ոսպով չաւ,
էն էլ ձեռներէս խլաւ, լափաւ ու քաշուաւ զրադ:

Քաղցած մնաց իմ փորը, իզուր անցաւ այն օրը,
Ընկել եմ շան հետ հորը, մնացել եմ կաղ 'ի կաղ:

Կնոջ հետն փսիրաւ, հայր ա մէջն ըսկսաւ,
Երբ զոնալն այս տեսաւ, ձեռն քաշաւ անսուաղ:

Իւր հացն ինքն կերաւ, մեր վըզին միւննաթ դրաւ,
Իմ սիրտս չի համբերաւ, ասամ յիմար զուռումաղ:

Բնութիւնդ ճանաչիր, յետոյ զոնաղը կանչիր,
Սրարմունքէդ ամանչիր, իզուր է գլխիդ փափաղ:

Ինչ մարդ ինքն անհամ է, նորա հացն հարամ է,
Ստտանին բարեկամ է, սիրտը մեռած, ինքն սաղ:

Ով ինձանից նեղանայ, սառը ջրով լողանայ,
Էն ինչքան չաղանայ, նորանից չի լինիլ մատաղ:

Ես միշտ Մայիճի տանը, լի եմ տեսել սեղանը,
Իրա հացի դուշմանը մէնակ չի մտել օթաղ:

Ձա'րկեար, ձեռդ առատ է, սփստ, քիսէդ կիսատ է,
Ագահից քեզ խրատ է, փողով չ'անես ձեռնախաղ:

10.

Ուրախարար երազ.

Այս զիշեր քեզ տեսել եմ, երազս բարին կատարի,
Երազահանի նայամ, ասաւ թէ օրն կատարի.

Ո'վ Ղուկաս վանանդեցի, թող այս բահարին կատարի.

Ըլորը կորեկ է տեսել, խեղճ է, նահարին կատարի,
Այսպէս անդին երազն էր դէպի չարն կատարի:

Իբր թէ ինձի ասար՝ էլ քեզի չեմ տալ նեղութիւն,
Գուցէ քո ստեղծողդ տայ իմ մեղացս թողութիւն,
Պաշք քեզ հալալ կանեմ, էլ չի համարես զողութիւն,
Տացէ Աստուած քեզ ու ինձ այսուհետեւ ջան սողութիւն
Ամենայն ցանկութիւնդ իւր ճանապարհին կատարի:

Բանաստեղծի երազն, կասեն, իսկի սուտ չի լինիլը
Իւր շահն պտռողի կամքն անօգուտ չի լինիլ,
Աւելի համ չունենայ, ինչ բանում պտուտ չի լինիլ,
Ես նորան պագ չեմ ասիլ, որ տեղը կապուտ չի լինիլ,
Գու լս'իր ինչ ասումեմ, թող իմ զարարին կատարի:

Տեսել եմ քեզ իմ մտին, զարմացիլ եմ, դա ի՞նչ բան ա
Անհաւատալի բանին այն ո՞վէ, որ չի զարմանայ,
Չեմ կարող ես ուրանալ՝ թէպէտ չարն անպիտան ա,
Լաւութիւնդ վզումբս միւսնաթ էլաւ, ո՞վ սատանայ,
Գնա՛, քո էլ զիլակդ գործերի շարին կատարի:

Ի՞նչ լաւ է քո այս զալոյ բարեաւ մնաօրն չի լինի
Ժամէ հանդատանալոյ, հանիր լիբասըն, չի լինի,
Փաթաթվենք մէկ զմէկու, մէջին չհասըն չի լինի,
Անթերի սէր վայելենք, ոչինչ պակասըն չի լինի,
Վիշերն չի լուսանայ, մինչի որ տարին կատարի:

Չարիւտարի կենաց թելն զիլթիդ արանքին հիւսել ես,
Գու նորս ճշմարտութեան քաջ սերտ թիւնն տեսել ես,
Նա է քեզ վարադ տուել, սիրելիաց դասին հասել ես,
Էն օրն Մայիթի մօտ ինձանից դու բամբասել ես
Քո անէծքն օրհնութիւն է, սերդ զարարին կատարի:

III.

Աշխարհին փրկիչն ազատաւ, որ զերի էր սատանային.
 Կովհասն փրկիչ համարի արքայորդի փոխարքային,
 Կարծեմ այս բանն յայտնի է Տաճկին, Ռուսին և Հային,
 Գատաւորաց արարմանցն բոլոր աշխարհ կը վկային,
 Կաշառն 'ի տեղի օրինաց թաղաւորում էր արխային:


Աշխարհն վասն մեր մեղաց առիւծի յանձնաւ մեր հօան,
 Ով անիրաւ մարդ որսող էր՝ համարձակ գնում էր մօան,
 Արդարքն անհաց մնացին, կորաւ ամենեցուն ոսն
 Բազուայ դաւառից էր դալիս Սոգօմ Գոմորի բուն հոտն
 Մարդն կնոջն էր թաղցնում, հայրն նորահաս տղային:

Ոչ մարդկանցից ամաչումէր, ոչ Աստուածանից էր վախում,
 Գաւառներն զերլի պէս՝ դայլերին տորդով էր ծախում.
 Քանի ճշմարտ զանգատն՝ մին չար ցանկութեան էր փոխում,
 Ռամիկներն աղնիւ իլան, հարկատու չմնաց Շամախում,
 Կօշիկ կարողն մարդացաւ, չի ձանաչաւ հայր ու դային:

Ով խնդիրքով մօտ էր գնում՝ այլքն նրան ծաղր էին անում,
 Ասելով թէ՛ առանց քրթամբ ու՛ր ևս խնդիրքդ տուն տանում,
 Ճշմարտութիւնն գողի պէս երես չունի դատաստանում,
 Գայլն դառի պէս են պաշտում, դառն դայլի տեղ սպանում,
 Ոչ ովից օգնութիւն չ'կայ, Աստուած հասնի մեր հարային:

Ոմանց աչքն արտասուքով, ոմանց վէրքն անդեղ տեսանք,
 Յետինն չար քան գառաջինն, բոլորն արիւնհահեղ տեսանք,
 Վերջի օրուայ նշաններն՝ մենք զիվուն տեղբատեղ տեսանք,
 Առանց սուր երկրաջինջ էլանք, առանց ջուր ջրհեղեղ տեսանք,
 Այս արարմանց մակի տալով՝ ողորմի տուինք Յուդային:

Ահու նալէն երկինք հասաւ, համբերն հատաւ օրհասի,
 Հասցրուց մեր սուրբ կայսերին դառը վիճակն Կովհասի,
 Ափսոսաւ փոքրիկ Կովհասին, որ անկողնէն ինչ մնասի,



Անբաժանելի եղբօրն ընտրաւ փոխարքայ Տփխխի,
Մեխայէլ Նեխայէլէն տուաւ մեզ փրկիչ ազգային:

Երբ այս լուրն հաստատ եղև՝ հնչեաւ զարբիւլեան փողն,
Մեղաւորաց զոյնն փախաւ, բռնաւ նրանց մահուան դօղն,
Գաւառներն աւետիս գնաց՝ դալիս է արդար դատողն,
Ոմանք թաղչիլ էին կամօւմ՝ օրինակ մահապարտ գօղն,
Զի անաչառ դատաւորի սուրբ երեսին ո՞նց կունային:

Իջաւ լուսոյ աստղն, որ էր մեծ գեներալ Վահագն,
Նորանով աշխարհն իմացաւ՝ ճառագայթեայ է արևն,
Աքսորեցաւ մեր երկրիցն այն պիղծ կամակոր չար գլեն,
Յայտնի նորան խըռով էլաւ մեր սուրբ կայսերի պարզէն,
Յիմարն անլապտեր գնաց տեսութեան լուսոյ փեսային:

Ո՞վ էր կարող արդարանայ՝ թէ իմաստուն կամ թէ տգետ,
Բացի Մովսէս Զօհրաբեանցէն, որ էր Բագուայ Կապուտեայ,
Լապտերն վառ ներկայացաւ, լուաւ ձայնն երանաւետ,
Վասն որոյ անուանեցաւ նա արժանաւոր Կարապետ,
Տէրն նորան անմահ պահէ՝ որպէս Յնովք, Նղիային:

Փառք արարաչին արժանացանք տեսնալ պողոտեր ամառն,
Ծագեաց արևն արդարութեան հալեցաւ շամատեայ սառն
Կողոպտիչ առիւծի տեղն՝ նստաւ Կօլի-Բէկէն գառն,
Սնթամահ ու ճշմարտասէր՝ քարոզ է նորա բարբառն,
Արդարոց հայր զորովազութ, նստող մեղաւորաց վային:

Տացէ անմահ թաղաւորն մեծ Աղեքսանդր երկրորդին
Երկասրի սուր յաղթութեանն ՚ի դէմ թշնամեաց թակարդին,
Կոստանդին Նիկոլայելիչ՝ Լեհաստանու քաջ միջնորդին,
Միքայէլեան դասն օրհնի մեր փոխարքայ արքայորդին,
Նոցա բոլոր ազգատոհմին՝ կամ մեծ իշխան Նիկոլային:

Կենդանութեամբն վայելի՛ կօլիւրէկին նոր իշխանն,

ձշմարտութեան ճանապարհ է նորա ամենայն սահմանն
 Առաքեալ մեզ մխիթարիչ, լուսաւորիչ խաւար տանն,
 Սրբելով մեր արտանուրն՝ ուրախացնի Վրաստանն,
 Բարեաւ նա լինի արժանի լանջանշան սուրբ Աննային:

Զա՛րկեար, դու ո՞նց կու մոռանաս ազնիւ Մովսէս

Զօհրաբեանցին,

Ձի նա արդար կարապետ է, որ և գործէ նման նմին,
 Այսքան մեղաց մէջ նա չ'եղև միախորհուրդ պիղծ առիւծին,
 Նորա սահմանն անսասան պահէ Հայր ու Ռդի և սուրբ Հոգին,
 Հաշտութեան նշան տեսանեմք՝ միշտ ազեղն զարնանային:

19.

Նոր եղանակի.

Ա՛ղջիկ, մի՛ գնալ գալիս եմ, ուզած մատանիդ տալիս եմ,
 Դու արդար ես, ես մեղաւոր, դու խնդումես, ես լալիս եմ:

Օրիս նման զիջիկ սեն, ձեռս քցեմ քո աջ թևն,
 Սիրես կքորդ արևն, ա՛ղջիկ, մի՛ գնալ, գալիս եմ,
 Ուզած մատանիդ տալիս եմ:

Ինձ մօտ ունես մին մատանի, ամենայն ժամ ինձ պիտանի,
 Ո՞վ պիտի վարդեդ հոտ անի. ա՛ղջիկ, մի՛ գնալ, գալիս եմ,
 Սրտիդ ուզածն տալիս եմ:

Մերի՛ք, եթէ յանցաւոր եմ, սևերես եմ, պարտաւոր եմ,
 Զովի մէջ քեզ հարկաւոր եմ. աղջիկ, մի՛ գնալ, գալիս եմ,
 Ուզած մատանիդ տալիս եմ:

Մինչի ես չի լինեմ սաղի, չի կարդիւ բիւլբիւն բաղի,
 Բաս զիւլբբդ ո՞վ կու շաղի. ա՛ղջիկ, մի՛ գնալ, գալիս եմ,
 Սրտիդ ուզածն տալիս եմ:

Հաստատ սիրողը խաբ չի տալ, ամենի խելքն թափ չի տալ,
 Մէկ ձեռը երբէք ծափ չի տալ. աղջիկ, մի՛ գնալ գալիս եմ,
 Ուզած մատանիդ տալիս եմ:

Թէ թիւֆանկ է՝ գնտակ պիտի, թէ մատանի է՝ ակն պիտի,
 Սթէ գանկ է՝ լեզուակ պիտի. ա'ղջիկ, մի՛ գնալ, գալիս եմ,
 Սրտիդ ուզածն տալիս եմ:

Զի տանես Մայիքէն հեարդ, կու դառնայ ք՞ վարդապետդ,
 Զարկեարն է հմուտ վարպետդ. ա'ղջիկ, մի՛ գնալ, գալիս եմ,
 Ուզած մատանիդ տալիս եմ.

13.

Ասացեալ ի վերայ չար կանանց.

Աղամ դրախտի մէջ փորձանք տեսաւ վատ կնկանից,
 Արբահամն հրեշտակից յամօթ քաշաւ շատ կնկանից:

Յակոբայ աղջին չէին եզիպտոսի մէջ չարչարիլ,
 Յովսէփին չար նիւթ կպաւ մին ձեռը առատ կնկանից:

Սողոմոն իմաստութեամբ յաղթաւ բոլոր գնդն զիւաց
 Փչացաւ անյիշատակ, առնելով խրատ կնկանից:

Դաւիթն մարգարէ էր անմեղ, նա էլ արիւն թափեց,
 Սաղմոսի երգերի մէջ խօսումէ զանդատ կնկանից:

Յովհաննէս Մկրտիչն էնդուր կերաւ մեղք ու մարախ,
 Փախել էր աշխարհիցն, վախումէր հաստատ կնկանից:

Ով կամի կանանց ծածուկ արարմանցն ծանօթ լինիլ՝
 Թո՛ղ նա իւր կնոջ մասին հարցմունք անի ետք կնկանից:

Զի խառնվել եղանակ Ֆրթունէն, չի լինիլ անքամի,
 Զի սլատահիլ դառնու թիւն, որ չի լինի արմատ կնկանից:

Մայիքէն թէ հաւատի կանանց՝ նա էլ սխալված է,
 Քանի մարդկանց տեսել է տունները բարպատ կնկանից:

Զարկեալն ո՞րտեղ տեսաւ, որ կանանցից լաւ են խօսում,
 Նա կասի՝ դա՛տ կնկանից, դա՛տ կնկանից: դա՛տ կնկանից:

IIA.

Ատացի՛ր պատասխանդ, ապա իմացի՛ր բանդ.

Ասամ, աղջիկ պարոն, ասաւ ին՞չ կասես,
 Ասամ խօսալ կուլինի՞, նա ասաւ՝ ո՛չ ո՛չ,
 Ասամ ձերմակ կուրծքիդ, ասաւ անհասես,
 Ասամ տեսնալ կուլինի՞, նա ասաւ՝ ո՛չ ո՛չ:

Ասամ վարքդ պատմիր, ասաւ սրբակաց,
 Ասամ ողորմած ես, ասաւ սրտաբաց,
 Ասամ մին պագ տո՛ւր ինձ, ասաւ հե՛ռու կաց,
 Ասամ մօտ դալ կուլինի՞, նա ասաւ՝ ո՛չ ո՛չ:

Ասամ է՞ր եմ անբողդ, ասաւ վիճակ է,
 Ասամ քո սէրն ին՞չ է, ասաւ կրակ է,
 Ասամ էն սրտինդ, ասաւ կոճակ է,
 Ասամ բանալ կուլինի՞, նա ասաւ՝ ո՛չ ո՛չ:

Ասամ երկրի խանրն, ասաւ ինձ դուլ է,
 Ասամ պահապանդ, ասաւ խիստ թուլ է,
 Ասամ ձեռինդդ, ասաւ փունջ վարդ է,
 Ասամ ձեռ տալ կուլինի՞, նա ասաւ՝ ո՛չ ո՛չ:

Ասամ ես Զարկեալն եմ, ասաւ յիմար ես,
 Ասամ Մայի՛ք ունեմ, ասաւ բէթար ես,
 Ասամ բռնեմ ձեռդ, ասաւ տկար ես,
 Ասամ խնդալ կուլինի՞, նա ասաւ ո՛չ ո՛չ:

Ի հանդէպ ասացելոյն Նիրանի.

Ամեն միտ ընկնելուս, սիրեցեալս իմ,
 Անպատմելի չարչարանք է հալս իմ,
 Կինացս մէջ միտս չէ՛ խնդալս իմ,
 Երկինք հասաւ այս դառն ողբալս իմ.
 Չար աստղի դէմ կանգնած է իղբալս իմ,
 Մահուանս պատճառ դառաւ սխալս իմ,
 Աւա՛ղ, այս լիսսիրտ հողի տալս իմ:

Սպասելով քո անվայել խոստմանն,
 Կատարվելուց յոյսս հատաւ այս բանն,
 Սէրութեան մէջ սա՛ էր միթէ պայմանն,
 Մտարերեւա՛, սէր իմ, ահեղ ստեանն,
 Անյողթ կաննն իմ ու քո զատատանն,
 Սիրոյ համար ստեղծուած է ինսանն,
 Արարմանցդ այս է զարմանալս իմ:

Սե՛ծ բան մի՛ կարծիր ինձի սպանելդ,
 Կենդան զոլով՝ մահուան դուռն տանելդ,
 Անողորմաբար հողիս կլանելդ,
 Անհաշառութեան սերմն փութով ցանելդ,
 Իմ աշխատած բուրաստանից հանելդ,
 Աւացս դէմ թշնամուս պահպանելդ,
 Մի՛ հաստատիր փորքըդ մոռանալս իմ:

Անճար ցաւս մին խօսալոյ դեղ չունեմ՝,
 Վերջացել եմ՝ էլ սրտումս եղ չունեմ,
 Մէկ սրտակից մօտ ազգական, ցեղ չունեմ,
 Քեզանից կրման ինձ արիւնահեղ չունեմ,
 Մարմնոյս մէջին մին մատուէր պօրեղ չունեմ,

Այս անտոնեան հուրից փրկող զեղ չունեմ,
 Այրուելու է 'ի զուր դիմանալս իմ:

Օրէցօր ցաւս զօրացաւ, վա՛յ է ինձ,
 Կենացս ծառն չորացաւ, վա՛յ է ինձ,
 Յոյքս աշխարհէն վերացաւ, վա՛յ է ինձ,
 Թշնամին եարիս տիրացաւ, վա՛յ է ինձ,
 Լալով աչքերս կուրացաւ, վա՛յ է ինձ,
 Այսքան արարքս զրացաւ, վա՛յ է ինձ,
 Տե՛ս ինչ արաւ վաղ չի հասկանալս իմ:

Քննի՛ր ասածս, կու լինիս սրտադէտ,
 Ողորմիր ինձ ո՛վ քարասիրտ բանդապետ,
 Զբարտուժես ինձ ամենայն ժամ թէպէտ,
 Մազէ շապիկ հագամ, չեյամ վարդապետ,
 Վարվելոյ դուռն չի ճարամ ես քո հետ,
 Դու աննամուս, ինձի մի՛ կարծիլ ազէտ,
 Հեղութեան նշան է մեղայ դալս իմ:

Միտ է տալիս միշտ սիրոյ արմատն ինձ,
 Խոցուել է զուբարից զանգատն ինձ,
 Զարկէարձ եմ, ինչ հարկաւոր է շատն ինձ,
 Երկու կեանքից լաւ է պապից հատն ինձ,
 Զի ստտահաւ մէկ ձեռք առատն ինձ,
 Պահպանումէ Մայի՛Քի խրատն ինձ,
 Եթէ ոչ՝ վաղ պիտէր վերջանալս իմ:

16.

Ասացեալ ի բերանոյ Մայի՛Քի առ
 որդին իւր Աերովբէ.

Աշխարհն ինձ կուրացրել Եմ,
 Լո՛յս տուր աչացս, որդեակի.

Դառնու թիւնս վերացրել ա,
Յոյնն ես կենացս, որդեակի:

Մի՛ հեռացիր իմ մտայնն,
Չեմ կշտանում քս հոտայնն,
Այրված սրտիս մորմնայնն
Բզխումէ լացս, որդեակի:

Տէրն: տայ քեզ՝ ինչ ես կուզեմ,
Պարզ արեգական պէս կուզեմ,
Թշնամույր կեանքը կէս կուզեմ
Չէ՛ իմ կամացս, որդեակի:

Քեզի Սերովբէ եմ կոչում,
Ես քերովբէից աղաչում,
Առանց բեզ ինձ չեն ճանաչում,
Փառք ես փառացս, որդեակի:

Ինչդրեմ լսես իմ կտակս,
Ով սիրելիս միայնակս,
Անցել է իմ ժամանակս,
Լեր իմ կամացս, որդեակի:

Գիտե՞ս, իմ թշնամիս շատ է,
Անունի պիծն մահից վատ է,
Սա մին հայրական խրատ է,
Կանգնիր դիմացս, որդեակի:

Աստուած ինձի կեանք է տուել,
Բայց ապաշխարանք է տուել,
Քեզ մխիթարանք է տուել
Աղերսանացս, որդեակի:

Պատկերդ տեսնալ չեմ կարում,
Բոյովէ ինչուալ չեմ կարում,

փառ
Գ Ե
ս
Վ ա
ս
Գ

Հողիս քեզի տալ չեմ կարում,
Միշտ ես մնացս, որդեակի:

Մայրդ քո ձայնդ չի լսում, *)
Օտարի նման է խօսում.
Բօլ աշխարհն են մեզ ամոտում,
Պտուղ բարեացս, որդեակի:

Չարկեարն պտուճաւ վարքերդ,
Որ լսի քո Մայնճ հերդ,
Դու մին ես, Աստուած քո տէրդ,
Նեա թշնամեացս, որդեակի:

17.

Մուխամ մազ Լէյլի Մէջնունի «Բիր
սաֆ դըզ օթուրդի, բիր սաֆ օղլան»
Եղանակով.

Աստուած սիրողն անկանջ անի լաւ,
Պատմեմ ձեզի ես մին անզին համբաւ.
Ամեն սիրահար ինքնահաւան է,
Բայց իմ քաշածն խիտո զովական է:

Կուլինի սիրական երկու տեսակի,
Մէկ հաստատը, մէկ առժամանակի.
Կամ երկու տեսակ կուլին սիրահար,
Մէկն անդիմաց, մէկն մուղարար:

Ես հաստատութեանս կապելով յոյս,
Էնդուր սիրեցի մին նորահաս կոյս:
Ինչքս ինձ ասաւ՝ զժուար է, փախիր.
Սէքս ինձ ասաւ՝ կեանք բառը ծախիր:

(*) Մայիֆի ամուսինը իրա միայնակ որդու-Սերովբէի ծննդեան վերայ հիւանդանարով խուլանումէ. նա իրա զգացմունքը արտայայտումէ միայն շարժմանք, ձեռքերով - - -

Խելքին ապեցի, սէրն վեր առի,
 Կեանքս մոռացայ, գործը ձեռ առի:

Սկիզբ խաբարս զնաց առանձին,
 Ասամ կարօտ եմ քո սիրոյ գանձին:

Ո՛հ, ի՛նչ տեսակի եկաւ սրտասխան,
 Իբր թէ ես եմ նորան անարժան:

Եթէ կրինել եմ մին էլ խաբարս,
 Երկինք պիտի հասնի իմ ահուզարս:

Խելքս ինձ ասաւ, «յիմար անասուն,
 Կարգե՞լ ես դու խօսմ Վէյի ու Մաջնուն:

Աչքիդ տակըն ա՛ռ ապրիլոյ վայրն,
 Բարձդ կուլնի քարերի ծայրն»

Սէրս բարկացաւ, ըսխաւ այսպէս.
 «Ահա քեզանից հեռանումեմ ես,

Որ այսքան ունես դու սրտումդ վախ,
 Ինձ երևում է ամեն բանդ ձախ:

Գիտե՞ս օնց պիտի քաջ սիրահարն,
 Ինչն անց կացունի իւր վզի լարն,

Գիշերն ու ցերեկը մին համարի,
 Փարվանի նման էլ չի դադարի:

Բիւլբիւլի նման կանչելը վարդ վարդ,
 Նորան դաւաճան կուլինի տակն մարդ,

Սիրահարի մօտ ջուրն ու կրակն՝
 Երկունս մէկ է՝ ձեռն ու դանակն:

Եթէ դու կամիս յատուկ սէրանալ,
 Շատ պատիժների պիտես տէրանալ:

Թանկ մի զնահատիչ հինգ օրուայ կեանքդ,
 Սիրով վայելածըն է աշխատանքդ:

Փռութա ընտրել՝ որն կամենաս,
 Կեանքն, թէ յատուկ «էջն կամենաս»:

Վիճակ արկեցի սիրոյ ու կենաց,
 Կեանք բառն կորաւ, աչք բառն մնաց:

Իսկոյն խարարն կրկեցի կարին,
 Ինձի ահ չի տայ այս ճանապարհին.

Յանձա առի շարչարանքն ու մահն,
 Էլ այնուհետև ի՞նչ անի ահն:

Սիրականիցս ստացայ նամակ,

Աստուածանիցս էլամ գոհունակ.

Տեսամ գրած էր՝ այս զիշեր արին.

Դամն ամիս դառաւ, ինձ օրը տարի:

Ինչդրամ աղաչելով արեգակին,

Թաք կենայ փոքր սև ամպի տակին,

Մինչի ես գնամ իմ սիրելոյս մօտ՝

Փունջով խորտեմ վարդ անուշահոտ:

Երբ արեգական նշոյլը անցաւ,

Մութն աշխարհն ինձ դրախտը դարձաւ.

Եարիս դռանն, ինչպէս մին աղքատ

Որսից մօտեցած վայրենի սէյեար,

Ինչպէս կարօտիւ նա ինձի խորտաւ,

Կուռներս քաշաւ զգովը փաթըթաւ,

Բռնած ձեռիցս ինձի տարաւ

Ետրա՛ր տուն ասե՛մ, թէ արքայութի՛ւն:

Ասաւ՝ սիրելի զարդ քո բնրի,

Իմ ջանն քեզի մատաղ համարի.

Ամեն խօսալուս մէկ սիրոյ համբոյր:

Աչքդ բաց արա, տես՝ ինչ կայ ո՛վ կոյր:

Անուշ բաներով սեղանը սարքեցի

Ում որ ես ուզամ՝ նա սողի կարգեց.

Սկիզբ խմաւ այն մարդի կենացն,

Որ անմահ է սրաշտով աղուհայն:

Լքցուց ասուա ինձ բաժակն,
 Ասաւ՝ գինին ու հացն է ճաշակն,
 Թո՛ղ սա մեր մէջի վկահն ինի,
 Որ մեր սէրը մինչի մահն ինի:

Ով որ այս ճանապարհիցը դառնայ,
 Պիտի նա Յուդայի մեղքը բառնայ.
 Ես թանն խմամ, նա կանչաւ՝ անո՛ւշ,
 Ծաղիկդ հոտաւէտ, վարդըդ անփո՛ւշ:

Բազմեալ սեղանի վերէն միացանք,
 Փառք ասինք աչքին, կամ թէ լիացանք.
 Այն բողբոջին մահի՛ծը պատրաստ՝
 Չորս կողմը կապած կարմիր առագաստ:

Երբ շխշբխալին հագուտը հանվից՝
 կասես հրեզն գիւլարը ցանվեց.
 Սիրոյ ցուցակիցն ստացամ փայ,
 Մի քանի հրեշափք ասան՝ ուխա՛յ:

Պարնան գիշերն նամարդի կեանքն
 Իզուր է փչացնում աշխատանքն.
 Լուսին մտաիկ էր, բիւրբիւրը կարգաւ,
 Եարի նգոված զլուսը ջարգաւ:

Հնչեաւ բարերի հողմն արեւելեան,
 Սու՛րբ, սու՛րբ դռնեցին դառք Միքայէլեան.
 Եպոս թ քարի պէս աղօթարանն
 Սարքեց արևի նուագարանն:

Ժամհարը երբ գանդակը հարաւ՝
 կասես թէ նա ինձ դժոխքը տարաւ.
 Օմբըն փչանար, ձեռն չորանար,
 Ին՞չ կլինէր մին օր ժամն մոռանար:

Կանչաւ սիրականս թէ՛ լոյս է, վե՛ր կաց,
 մխտոտեր շատ ունե՛նք, իզրարի աէ՛ր կաց.

Անձարու արանք վերջին պուշտին,
Անդին ընծայ է դասուցը դասին:

Ի՞նչ բաժանվել էր, կասես թէ մին սուգ,
Աշխարհն իլաւ վերջ, հաւատէ՛ք դուք:

Արտասուք սասմ՝ բարեաւ մնաս, եա՛ր,
Ասուած պահի քեզ ինձ համար արգար:

Այսպէս սիրեցիմ ես իմ ջանանին,

Այժմս դէ նայէ՛ք աշխարհի բանին.

Այս ուխտիցը ո՞նց կուլինի հեռանալ,

Այդպէս սէրը ո՞նց կուլինի մոռանալ:

Աստուած սիրողն խիստ լիաբերան

Նախորդին ասի նզովկալ անբան.

Վերջումն տեսէ՛ք ի՞նչ արաւ ինձի,

Աշխարհն իմացաւ ձայնը պղնձի:

Չորս ամսոյ մէջին սէրից դադարեց,

Ինձ անտես արաւ, մի այլը ճարեց.

Ես մտիկ տալով մնացի կերեան,

Նա սիրածի հետ անումէ սէյրան:

Ո՛չ տեսնում է, ո՛չ իւր մօտ է կանչում,

Կասես թէ նա ինձ էլ չի ճանաչում.

Լսէ՛ք կենդանւոյս արած կտակն,

Ես եմ՝ ամենեցուն օրինակն:

Ու՛մ որ պատահաւ, ինչ ժամանակի,

Թո՛ղ վարդը քաղի, ծառն կրակի.

Կանանց հակառակ է խղճմտանքն,

Թէ շինած լինին սեւանայ վանքն:

Ինչուր սիրեցի Մայի՞ճի վարքն,

Որ սէրից հեռու է նորա արարքն.

Անեար մնալն միշտ կու պատահի,

Անսէր մնալն զօրծ է ազահի:

Զարկեալ, խրատոյ թէ լաւ խրատ է,
ինչո՞ւ զործերդ անհամեմատ է:

18.

Աշխարհիս մէջին ես քանի տեսակ սիրահար եմ տեսել,
Ոչ սերիցն քաղցր պտուղ, ոչ նորան մին ծար եմ տեսել,
Որքան սիրական եմ տեսել՝ դիմի անէջթիրար եմ տեսել,
Ով որ սիրական չունայել, չանի ես աշխարհ եմ տեսել,
Սիրողի սիրան շուշի պէս, սիրածինն քար եմ տեսել:

Սէրն է մարդկանց աշխարհի մէջ ցաւ ավող, մոլորացնողն,
Սէրն է մարդկանց ուրախ պահող, օրքստօրէ զորացնողն,
Սէրն է մարմնոյ նիւթն քաշող՝ կանանչ կեանքն չորացնողն,
Սէրն էր Յովսէփի դեղնեցիկի դուլէլխային կորացնողն,
Սիրոյ մէջ դանազան բարիք կամ դանազան չար եմ տեսել:

Ազամն 'ի սիրոյ եւայի՝ պտուղն կերաւ, մերկացաւ,
Դաւիթ մարդարէն սիրող էր, արքայութեան դուռն բացաւ,
Անսէր մարդն անհոտ վարդ է, եարաբ նա էլ ի՞նչ հասկացաւ,
Էշն էլ կասի դարնան համար՝ թէ ես էլ բահար եմ տեսել:

Թէպէտ անսէր մարդ չի լինիլ, կտանն չափաւորն լաւ է,
Մարդն ունի ընարողութիւն, որն վառ է, որն լաւ է,
Փուշ աշխարհն անցաւոր է, էլի ուրախ օրն լաւ է,
Ով սիրուն տեսաւ, չի սիրաւ՝ նորանից մին քունն լաւ է,
Աչքն չի տեսնիլ, սիրան ուղի, կասի ի՞նչ խէյր ու շառ եմ տեսել:

Իմ տեսած վարդ սիրականին ջան մատաղ անես, փոքր է,
Գանի որ կնիօք կենդան ետ, հեան խաղ անես, փոքր է,
Ովջ մասներն ոսկով պտակս, զան վարաղ անես, փոքր է,
Անհաստատ սիրականներին մարթեն ու աղ անես, փոքր է,
Ես Զարկեալն եմ, սիրուններից հարիւր թէ հազարն եմ տեսել:

19.

Ով ունի աղջիկ պարուն՝ նորա գարունն է գարուն.

Գարնան եղանակ, եկ մի՛ թող աչքս ճանապարհի,
Աստուած սիրես, արի.

Ցան չի թողել ինձ իմանալ համբն բահարի,
Կուլինի քանի տարի.

Այսօր եարս ինձ խոստացելոյ բանքն կատարի,
Գարձեալ չի դադարի.

Նոր աշխարհ եմ՝ ընկել, կարօտ եմ ուրախ խարարի,
Թող իմ իխտիւարի.

Ով կայ ինձ նման տանել առող էշխի զուժարի,
Միշտ ըստ սիրահարի:

Երբ որ անտառից բլւրբլւլէ ձայնըն տուն է գալիս,
Հողիս բուն է գալիս:

Իբրև աւետիս քօլ աշխարհին գարունն է գալիս,
Սրտի սիւնն է գալիս.

Ցանկալի սարն շատ ինձ նման մէջնունն է գալիս,
Խիստ անքունն է գալիս.

Այս առարկայի ուխտաւորն անհունն է գալիս,
Ով թագունն է գալիս.

Նըշան սիրոյ ընծաներ ունեն փունջ նունուֆարի,
Կամ նարկիզը սարի

Երկու լեզուանի եարի տէրն դատ կանի ձեռնէն,
Վատ եարերը մեռնեն.

Հաստատ եարի տէր բաղդաւարըն կու բունի կրօնէն,
Կու գայ բաղի դունէն.

Մէջքից խարտած, ջուխտ ձեռք բռնած ծոցի նունէն,
Միմեանց ցաւը կտռնեն.

- Ինչքան սիրոյ մէջ խաղ է լինում՝ դիմ էլ կուբունէն,
Մէկ մէկու կուխաունես,
Թող ճգնաւորըն տանջվի արանքումը քարի,
Ինքն իրան բէզարի՝
- Լաւ քննող է պէտք հասկանալոյ այս գովասանքըն,
Ի՞նչ միտք ունի բանքըն.
- Սէր վայելչութեան պահանջումէ մարդկային կեանքըն,
Կամ կնդուր է ջանքըն.
- Ով խտտակրօն, տուր ինձի սրտիս կարօտանքըն,
Քեզ ի՛նչի ք՞ վանքըն.
- Է՞ր բաց կըթողեմ իմ ձեռիցս նաղդ աշխատանքըն,
Որ մօտ է արանքըն՝
- Եթէ կամենաս անուանիր ինձ ընկերը չարի,
Ինչ կամիս համարի՝
- Զարկեար, դու դարունն ինչ ես անում, անսիրական ես,
Հերիք դաւի անես.
- Ոչ անապատի, և ոչ աշխարհի, ինչի՞ նման ես,
Իբրև կիսաջան ես.
- Սիրոյ ճամփումըն ինչ քաշումես՝ չի փոշիմանես,
Վաս անուն չի հանես.
- Մի բեռան տակըն, որ մտիչ ես՝ միշտ պիտի տանես,
Ա՛խ ու վա՛յ չի անես.
- Ինդրես Մայնձեց քարիդ դրել լեզուիցը եարի,
Հանգիստ սիրահարի՞»

Շատ խմորն ազահ է, հարբելն յատուկ մահ է.

Գինեատունքն քիչ պիտէին, որ զինին մղղար ունենար,
խմորն փառք ու պատիւ, ծախորն հազար ունենար:

Հալալ է խելքներին, ոչ թէ յիմար հարբեցողին,
Եարաք էն հարբեցողն չի՞ ավստուած տուած փողին,
Համարձակ քուժիք է տալիս իրան բարի կամեցողին,
Կարծելով մեծ բանի է՞ թասն է խիում՝ փարչի կողին.
Ո՞վ կասի ունի է խուլին, աչք է կուրին, սոք է կողին.
Ես կասեմ՝ խուլացնում է, կուրացնում է աչքը սողին,
Շատ խրմաւ՝ կու կորցնի, ում որ ինչ հնար ունենայ:

Հարբածի պատուած շորն՝ իրան աչքին լաւ կերելի,
Խաշկին հալուայ կասի, հատիկն վլաւ կերելի,
Եթէ ասես ողորմի հօրդ, նորան կուլ, դաւ կերելի,
Տուն կուղայ՝ ջահիլ կինն շատ ամենապառաւ կերելի,
Արեւելքն՝ արեւմուտ, հիւսիսն՝ հարաւ կերելի,
Թէ ասես փոքր քնիր, մրրախիլն ցաւ կերելի,
Կու վազի եւ զինետուն, թէ գնալոյ ճար ունենայ:

Հարբողն անհնար է, որ տանը մէկին չի ծեծի,
Վանքի կատրած շան նման՝ անտեսի ձեռն կուկրծի,
Իբր թէ բարկացել է, հա կու կոնծի, ու հա կածի,
Մահնա կենաց խմելն՝ առաջի բանն է հարբածի,
Կարծելով հաղ է ասում, կուտանի զահլէն քրնածի,
Ոչ էլնն խոտ կու ձղի, ոչ կարձակի, որ արածի.
Ձի ուզիլ որ աշխարհի մէկ բանից խաբար ունենայ:

Երանի էն խմողին, որ իրան խելքըն չափումէ,
Հարբելն միտ բերելուս՝ ահուգողով սարսափումէ,
Երբեմն իւր թամահին գինեխաւ ջրով խաբումէ.

Ով որ ազատ է լիումէ, այնպէս էլ ազատ է լափումէ,
Անքնար պար է դալիս, սատանէն մօտիկից ծափումէ,
Ում դռնից որ ներս մտաւ, տան տիրոջ միան թափումէ,
Յօժար է, որ դուրս քցի, հինգ թուման զարար ունենայ:

Զարկեար, այլոյ խրատար, բաս ինքդ էլ փոքր խմե՞ս,
Եթէ մին կուժ պատահի, չես դադարիլ, որ չի քամես,
Խունկն նիսեա ես ծխում, բայց գինետան փողն տամես,
Եթէ խապառ չի խմես՝ Մայիֆէ հետ բարեկամ ես,
Խմելուս անխուշտումես, չի խմելուս շատ անհամ ես,
Լրվելայ քառասուն տարիդ, աշխարհի զովդերից խամ ես,
Քեզ նմանն փողի տեղ բաւքա զահրումար ունենայ:

ՉԻ.

Մուխամմազ ի վերայ սիրոյ և գարնան.

Գարուն է բացուել՝ դէպի սարին նայիր,
Կանանչ կարմիր ծաղկանց կամարին նայիր,
Մանուշակի ծուռ վզն տարին նայիր,
Արիւնահեղ քաջ լալազարին նայիր,
Յանդիման է, նարկիզի խարին նայիր,
Մէկ մէկու մօտ ամենի կարին նայիր,
Բիւլթիւլ, դու քո վարդիդ ձանտպարհին նայիր,
Սիրոս, դու քո իզուր դադարին նայիր,
Ա'չք բաց արա մին այս աշխարհին նայիր,
Զարկեարի պէս քաջ սիրահարին նայիր:

Մի՛ տուր սէր աշխարհաւեր փողին,
Այն կրակն ներհակ է գարնան ցօղին,
Երբ հասնումէ սիրուն շամամէն թաղին՝
Օրինակ է նորահասից զամբաղին,
Սորանք են պատուողն ձմեռան լեղին,

Ամեն ցաւազարն հասաւ իւր դեղին,
 Արժանացաւ մշակն տեսնալ հեղին,
 Այդեպանն սիրով է նայում բաղին,
 Փա՛ռք տուր սորանց քեզ համար ստեղծողին,
 Կանանչ կարմիր ծաղկանց կամարին նայի՛ր:

Գարնան հոտից սողունք չեն մնում նաշի,
 Անբաններն փոխարկումեն նոր կաշի,
 Երբ գալիս են պողարերու թեան յուշի՝
 Յայնժամ պիտի երկու սէր միմեանց քաշի:
 Ո՛վ մարդ, քանի կենդան ես դովղը քըշի,
 Մի՛ թող քեզի աշխարհն ՚իդուր մաշի,
 Ցանկացողն հագնելոյ դառ դումաշի՝
 Միաքն նա է սիրողի սիրան տաշի,
 Երբէք չի լինիլ վարդի ծառ առանց փուշի,
 Յանդիման է, նարկիզի խարին նայի՛ր:

Մարդոյ կեանքն նման է զլուսած թելի,
 Մտկանուժէ օրէցօր կարվելի,
 Ամեն սիրահար ունի մէկ սիրելի,
 Մեր հողեղէն լեզուին է անպատմելի,
 Կայէ՛նն էր, թափաւ արիւնն Աբելի,
 Երևի անսերութիւնն է ատելի,
 Ամեն բանի զլուսն սէրն է էլի,
 Ո՛վ սէր չունի, նա է խիստ ողորմելի,
 Եթէ կամիս սիրոյ բանն քննելի՝
 Մանուշակի ծուռ վրդի տարին նայի՛ր:

Մին տարւոյ մէջ չորս է մեզի եղանակ,
 Ամառ, ձմեռ, աշուն, գարունն գուշակ,
 Սեբա են մեր կեանքի համար օրինակ,
 Ինչպէս մէկ տարին փոխվումէ չորս տեսակ,
 Մարդկան ազգի ապրուստն էլ է նոյն գունակ:

Շատ հարուսաներ տեսնումենք վերջն մշակ,
 Ով քարասիրտ, տես խումար աչք ունըք բարակ,
 Սէր բառն կամ ջուր թարղմանի կամ կրակ,
 Ո՞նց են մորթում սիրահարին անդանակ,
 Արևնահակ քաջ լալազարին նայի՛ր:

Աշխարհի լաւ վարքըն ինսանին հասաւ,
 Դառն ապրուստն չար սատանին հասաւ,
 Անվայելի կայքըն պատանին հասաւ,
 Պատահմամբ արժանն անարժանին հասաւ,
 Ում վիպն աշխարհի չուանին հասաւ՝
 Դաղարկ ձեռօք նա զերեզմանին հասաւ,
 Մեղուն, նուենուժար բայասանին հասաւ,
 Ինչ ծաղիկ որ ում բուրաստանին հասաւ՝
 Ամեն սիրող իւր սիրականին հասաւ,
 Բիւլբիւլ՝ վարպիզ ճանապարհին նայի՛ր:

Երկու կողմանց սէրն ես միշտ լաւ տեսայ,
 Մէկ կողմից սէրն սրտամաշ տեսայ,
 Սիրականի հաստատն սակաւ տեսայ,
 Քաղցր սիրոյ մէջ երբեմն դաւ տեսայ,
 Խռով կենալից սիրոյ հալաւ տեսայ,
 Ոմանց մէջին հաշտութեան փլաւ տեսայ,
 Հաստատ սէրն մին անհանգիստ նաւ տեսայ,
 Ում որ աղաւնի կարծեցի՝ հաւ տեսայ,
 Անխզելի սէրըն միշտ կամաւ տեսայ,
 Մէկ մէկու մտտ ամենի հարին նայի՛ր:

Աղերսումեմ, պաղատումեմ, խղճալի՛,
 Ողորմի՛ր ինձ, է՞ր ես թողել այս հալի,
 Քար ընկնի գլխին իմ բաժին իղբալի,
 Սէրն լծաւ ինձի տխրութեան կալի,
 Հրաման չկայ մին բոսպէ դաղար տալի,
 Կարօտ եմ պայծառ երեսի, սե խալի,

Իժ բժիշկն չին թողում մօտքս գալի,
 Վայ ինձ համար, անարժան եմ տեսնալի,
 Մինչև ե՞րբ մնաս այդպէս Ֆիքրի խիալի,
 Սիրտս, դու քո իզուր դադարին նայիր:

Ինչ սրտի մէջ բնակված է քաջ սէրն,
 Թարաշում է այն հմուտ ակունքներն,
 Մոռանում է մարդ իրա հէրն ու մէրն,
 Սիրոյ մէջ փչանում է անհամբերըն,
 Յովսէփի նախնի պատկեր էք քո պատկերն,
 Կրկնակեանք ուղիք, բաց մի՛ թող այս խէրն,
 Արի՛, տե՛ս այժմեան աշխարհի զխլճերն,
 Մոլորվել են վարդապետն ու տէրտէրն,
 Ո՛վ դու զուլէյսայ Յովսէփի ընկերն,
 Ա՛չք բաց արա մին այս աշխարհին նայիր:

Անէծքն զնաց Իւայ Ազամի հետ,
 Ի՞նչ բան ունենք մեզ պապի հետ, մամի հետ,
 Սրդար զինին բերէք բիւլուլ ջամի հետ,
 Մայէճն հազ անի ոսկոյ ծամի հետ,
 Խառնիկ չէ՛ պէտք հալալն հարամի հետ,
 Ո՞նց կու սազի համեղն անհամի հետ,
 Ինչպէս թառամեալս Անթառամի հետ,
 Մաշխումեմ անվայել բարեկամի հետ,
 Սէ՛ր ցանիր, սիրահար, Աբրահամի հետ,
 Զարկեարէ՛ պէս քաջ սիրահարին նայիր:



**Ասացեալ ի վերայ պատուելի մուրքի, որ ՚ի
ձեռս ոմանց եղեալ է անպատիւ.*)**

Գոհունակ եմ քեզանից, ով փառահեղ կամ սև միրուք,
Քեզնով եմ ես ստացել աշխարհիցն պարգև, միրուք
Ով քեզի վատ է ասում՝ նա խելքից է թելթել, միրուք,
Ցանկասէր պիղծ մարդիքն քեզ չեն սիրում թէև, միրուք,
Երեսիս զարդն դու ես, կարգին բուսած անձև, միրուք,

Քեզի ինչ հարկաւոր է ունդ ու խինէն կամ այլ հոտն,
Միրքաւոր թէ անմիրուք՝ կեղտոտ կուլինի կեղտոտն,
Արժան է սուրբ անուանել մաքուր հողում բուսած խոտն,
Մինչև քեզ մէջլիններում իմ տեղս էր դուան մօտն,
Հիմիկ պատուելեաց դասում՝ ինձ տանումեն վերև, միրուք:

Միրքաւոր են նկարում մարգարէից պատկերները,
Առաքեալք կամ մարգարէք միշտ ունէին մուրքի սէրը,
Անմիրուք ես չեմ տեսել մեր հոգեւոր տէրտէրները,
Նա է մեզ ցոյց տուողն մարդկանց ջահիլն ու կամ ծերը,
Ով քեզի անարգումէ՝ նա պիղծ է կամ չար դև, միրուք:

Որտեղ քաղցած լօթի կայ՝ երևան աղլոր եմ տեսել,
Ո՛չ ջիբին խարջն օրական՝ ո՛չ հազին լաւ շոր եմ տեսել,
Մազն սպիտակ, երևան սափրել տուողն նոր եմ տեսել,
Թան լախած սև շան նման աչքերն պղտոր եմ տեսել,
Թառամած բուրաստանին ի՞նչ պիտոյ է անձրև, միրուք

Ոմանք իրանց պատկերն միացնումեն կուրքի հետն,
Այս գործն է խիստ հակառակ մեր հայրենի վարքի հետն,

*) Հանդուցեալն այս երգով ակնարկում է եղել Սէյնաղին, որը նկարագրած է միրուքին վատ կողմից. տես Հայկական Քնարի երես 566: Ա. Գրիգորեանց:

Ամենից գովելի է վարվելն աշխարհի հետն,
 Ինչ վատ է կարմիր թուշեր կայնելն մարքի հետն,
 Այսինքն բամբակի մէջ պահել վարդի տերեւ, միրուք:

Եթէ մին պառաւ ձիոյ՝ քուռակի պէս պոչն խուզես,
 Տանես փողոց ծախելոյ, ջահել տալարի զին ուզես,
 Ատամին մտիկ կանկն, կասեն քեզի՝ դու անպող ես,
 Օյինբազ մարդոյ նման՝ մասխարայ ես կամ՝ տնազ ես,
 Շատերին ականախ կասեմ, անմխ կասեմ ես քեւ միրուք:

Չարիեար, դու կեղծաւոր ես, միրուք չունես, է՞ր ես խօսում,
 Ե՞րբ ես դու այս բռուերն կանանց բերանիցն լսում,
 Ճար չունես՝ Մայիճի մտ վեղդ գանակի ես քսում,
 Որով դու այսուհետեւ ծեր մարդոյ գործ ես սխում,
 Արի, բա՛ց թող ունենաս մին շէն ու այլ վէլ, միրուք:



Ով բանաստեղծ է, խօսքն անկեղծ է:

Դու խնդրումես, որ քեզ գովեմ, բայց ես ուզումեմ նգովեմ,
 Մի՞թէ այնքան յիմար կով եմ, որ սուտ ասեմ, հոգիս պովեմ:

Եթէ գովեմ անարժանին՝ թամբի պէս է պող հայվանին,
 Ողորմի տալով սատանին, ընդ արդարս ո՞նց հնչովեմ:

Ոչ ուզարելից ես տաճիկ, ոչ խնկից ես Հայոց գտտիկ,
 Ոչ դաթայ ես նաւահատիկ, արդեօք չե՞ս ասում ես ո՞վ եմ:

Անուան գովասանք ես ուզում, սատանի բամբակի ես զգում,
 Գովասանքն քեզ չի սազում, եթէ ոտներն էլ բուխովեմ:

Չարիեարն եմ ճշմարտարեանի, վասն այն ոմանց չեմ ընդունակ,
 Մայիճից վեր առ օրինակ, եթէ ոչ՝ քեզանից խռով եմ:

Գոհունակութիւն նասիրից.

Դու տասնուչորս տարեկան ես, ես քսանին հասամ հերէս,
Դու աշխարհն նոր հասկացած, ես քո սիրոյ համն խմացած,
Քեզ ասումեն աղջիկ պարուն, ինձի ասումեն մեծատուն,
Յայանի բան է, ոչ թէ թաքուն, Աստուած է մեզ միմեանց զուգել:

Դու խօսումես հանդարտ, համեզ, ես հասկանումեմ տեղրատեղ,
Դու անուանի ՚իմէջ կանանց, ես քաջ եմ ՚իշարս արանց,
Դու ինձանով ես պարծնում, ես քեզանից եմ լիանում,
Էլ նասիրն չեմ հասկանում, Աստուած է մեզ միմեանց զուգել:

Քո մազերդ սարքին հիւսած, իմ բեղերս թանձր բուսած,
Քո երեսդ վարդ նորաբաց, ես համբուրումեմ քո կամոց,
Դու ինձ համար հոտով շամամ, ես կառնեմ ձեռս միշտ ամեն ժամ,
Դու Սառայ ես, ես Աբրահամ, Աստուած է մեզ միմեանց զուգել:

Դու մին մեծագին միւրվարի, ես քո մօտին նաղ մուշտարի,
Դու վայելչութեան ցանկացող, ես մուրարից չե կուշտացող,
Դու մահիճի վերէն փոքրաքուն, ես սիրահար եմ միշտ ջունուն,
Դու էլ հարուն, ես էլ հարուն, Աստուած է մեզ միմեանց զուգել:

Դու համարիր Աննի տարին, ես ճարացնումեմ Ջարկեային,
Դու սովորել ես իմ քեջին, ես մուռացել եմ Մայեջին,
Քեզ չե խրատել քոյ մերն, ինձ չի քարոզել աէրտէրն,
Ե՞ր չպահենք միշտ սուրբ սէրն, Աստուած է մեզ միմեանց զուգել:

Աէր կու քաշես եարիցն, աչաց ճանապարհիցն.

Եարա՛ք Աստուած, սա ո՞վ է, որ զալիս է նաղ անելով,
Աջ ու ձախ մտիկ տալով, ինքն իրանից հազ անելով.

Ծամերն նախշուն հիւսած, երեսին զօթազ անելով,
 Ինքնահաւան թովուզ է, խնդումէ փարվազ անելով,
 Կտրաւ իմ կեանքին թելն, սէրն սրտիս սազ անելով:

Ով այդպէս տեսնի քեզի, ցաւ կու ճարի անտանելի,
 Զադուրազ թուխ աչքերդ հնար չէ մաքից հանելի,
 Աղջիկի Աստուած կու սիրես, Իրբ դալիս ես կէշտ անելի,
 Խնաց տուր ողորմելոյս զամ ճամփիդ ծաղկունք ցանելի,
 Ուրախ ովսաննայ ասեմ, ջանս փիեանդազ անելով:

Երեսդ բա՛ց մանարի, վառ ճրագն շալ չի ուզիլ,
 Բնածին վարդ թուշիդ զարդարանքի խալ չի ուզիլ,
 Ծոցումդ վայելողն զրախան տեսնալ չի ուզիլ,
 Քո սիրով ճաշակվողն էլ այլ սէր զզալ չի ուզիլ,
 Ճար չունեմ ինձ խարուսեմ, տեսածս երազ անելով:

Եթէ որ փոքր խօսես հարիւր տարեկան ծերի հետ,
 Կուշնես կրկնածանօթ իւր ջահլուլթեան սերի հետ,
 Ով դժոխք չի ցանկանայ մին քիզ նման ընկերի հետ՝
 Ձի տեսիլ արքայութիւն սէր քարոզող սուրբերի հետ,
 Փրկութիւն չի ստանալ, աղքատաց նիեազ անելով:

Չարկեալն կանչիր մտադ, որ միշտ քեզի հարկաւոր է,
 Իւր բարեկամ Մայիճն քեզ ընծայ էլ ուխտաւոր է,
 Դարդիմանդ, քաղցրախօս, սէր քաշելում բաղդաւոր է
 Դա վաղուց հասկացել է, որ աշխարհն անցաւոր է,
 Սէրութեան դուռն է բացում, վարքդ մուխամազ անելով:

Թերերիցն կանանչեց, հարբողն չի համանչեց:

Էս խմած եմ, դու հարբածես, արի՛ ջան ասինք, ջան լսինք
 Ես էլ կածեմ, դու էլ կածես, շահնազ ասելն կրտսենք:

Փիլիսոփէն ցեխոտ կիլի, չուեննալ երբէք հայկի,
 փողն մերն է, խմենք էլի թաք ոչովի չի բամբասներ:

Բուականն է մեր ուսումն, ջոկու մնք եկածն ու հումն,
 Դուրս բեր էն զգուսն, փոքր մարիֆաթից խօսներ:

Ի՞նչ մարդ է Յակոբ իշխանն, միշտ նստումէ իրա տանն,
 փողի շահ առնելն է բանն, այդ բաներիցն մենք պաս ենք:

Ո՞վ էր Ղուկաս Ամանդիցին, խաբեցին տունը քանդելին,
 Վերջն էշի պոչն կոպեցին, մենք նորանից լաւ Ղուկաս ենք:

Մայիճն չի տամ մեր հացն, թող լոց իլի իրա լացն,
 Խմենք Ջարդեաշի կենացն. որ նորա հետ միաթաս ենք:

ՉԳ.

Մուխամմազ 'ի վերայ անհաստատ սիրականի:

Ես անպարտ, դու պարտաւոր, մեզն չէ ինձէն, սիրական,
 Նամուսն հարկադրու ինձ քորդ քցել դէն, սիրական,
 Քեզ սիրամ ինձ սէրակից, ո՞չ իմ է պահես քէն, սիրական,
 Բնութիւն բարոսի ունի աշխարհիս ամեն, սիրական,
 Գուցէ դու նասիր չէիր ինձ 'ի վերուստէն, սիրական:

Սրբեօք նա ի՞նչ վատ ժամ էր, ես քո սէրն յանձն առի,
 Սէրն հանդարտ կրակ է, որ չի վջես, ո՞նց կու վասի:
 Օրինակ արած պիտէիր՝ վարդն ու սպասին անտասի
 Ահա քեզ յանդիմանեմ քո մեղքերն նման ճառի,
 Սիրահարքն դիւի լսելով, քեզի անիծեն, սիրական:

Ինչքան որ ես լիտցամ աշխարհից, այնքան լիանաս,
 Դու էլ այս ցան քաշես, ապս իմ վերէն հլանաս,
 Հալվիս անհալ մամի պէս, պարզես ու կրկին ուշանաս,
 Զարչարանքս հասկանաս, սրտով իմ հետն միանաս,
 Յետոյ արլուս շանես ձեռներիդ խիննն, սիրական:

Ահա թիւնն ըստ կամաց է, երբ դու չուզես՝ ես չեմ ուզիլ
 եթէ մահուան՝ ժամին վրիկչս իլնես՝ չեմ ուզիլ,
 Մինչի մահս անսանել, գեղեցիկի երես չեմ ուզիլ,
 Իմ վերէն տղա աստղաց զէմքն քեզի պէս չեմ ուզիլ,
 Գէշ իլնեն, Ճշմարտասեր, ողբս յօրինեն, սիրական:

Իմ արիւնս թափողին չի պատահի անզգամն,
 Չի հարցընիլ սրն է ետըն, սրն է սիրող բարեկամն,
 Ինչ տեսա՝ ձաշակվում է, զիտի մէկ է համարում համն,
 Խարերայ ուռկանսօն սրում է օրը մէկ խամն,
 Ծասերին կորուստ շինաւ հայրենի երկրէն, սիրական:

Իջար է դանդաղել յո, որ քեզ չունես դպրութիւն,
 Քո վարմաւքիդ միջումն երբէք չերևում հայութիւն,
 Ծախել ես ուզիդ սէրն, զնել դիւաց ուստյութիւն,
 Արարք սրտիս մէջն այնքան քցաւ երկրայութիւն,
 Ել կանանց չեմ հաւատիլ, եթէ սուրբ իլնեն, սիրական:

Այս խնդիրքն կու պահեմ մինչի դալուսան Յիսուսի,
 Վերաւորս կու կանչեմ, ս'ի կակից որդին կուսի,
 Մի՞թէ դուք սիրուններն ստեղծել էք այս մասի,
 Որ իւր սիրահարն սպանի, երբէք նորան չի ախտսի,
 Չախտիողմէն ինձ կուբերեն, քեզ աջակողմէն, սիրական:

Երբ դու կլնես յանդիման այն անաչաւ դատաւորին,
 Քեզի կասի՝ ս'ի անպիտան, նայի՛ր սիրահարիդ օրին,
 Ինչպէս դու չարչարիլ ես սիրոյդ մատաղ ուխտաւորին,
 Արժանի ես ասնջվելոյ դժոխքումն մինչի խորին,
 Սատանայն կու քաշքըշի քեզ 'ի գեհնն, սիրական,

Քաջ գիտեմ, այն ժամանակ ես չեմ կարու համբերել,
 Կու ընկնեմ տէրիս ոտերն, կու խնդրեմ մեղքդ ներելի,
 Քեզ կասեմ վշով մի՛ առ, ինձ վկայ չունեմ բերելի,

Ինձ նման նամուսքաշին ո՞նց ես մոռանում, սիրելի,
 Լաւ է քննել դարձէդարձ բանի սկզբէն, սիրական:

Զարկեալն դժուար չունի, որ քեզ դժոխային անի,
 Նա քեզ խրատ է ասում, իւր սրտին արխային անի,
 Մայի՞նց թաքուն մտորդ զնալ, գալն թայլն անի,
 Ինչ դարդիմանդ փոխարէն իմ այս հասկու սայլն անի,
 Ես կասեմ շատ ապրի նա, դու ասիր՝ ամէն, սիրական:

ՁՅ

Խօսակցու թիւն երկու աղջկայ բերանից, որոնք
 անբաղդացած են պրիդանի պատճառով:

Երկու աղանի տեսամ մին դաճասում,
 Մէկ մէկու իմ սիրելի քոյր են ասում:

Աշխարհից զանգատվում են այս տեսակի.
 Ենթաբար ո՞վ կայ մեզ նման դառն վիճակի,
 Աստուած մեր բողբ զրոյն դուռն փակի,
 Զկայ աղջիկ մնացած մեր հասակի,
 Ինչո՞ւ է մաշում մեզն զամում զուտում:

Մեր խնամախօսներն լալացել են,
 Դովասանք խողներս խուլացել են,
 Փողասէր ջահիլներն ծուլացել են,
 Ասումեն սորանք անիդրալացել են,
 Էնդուր են պատիւ պահում տունում, դուտում:

Ո՞վ կարէ ասել մեզի սորանք դէշ են,
 Մեզն զէշ ասողներն իրանք էշ են,
 Զունի մեզ պէս զեղիցիկ շասան-փաշեն,
 Զեն կարալ մեզ նմանի նազն քաշեն,
 Զեն տեսել մին օր մեզի քաշ լիբասում:

Չարախօս լեզուի ձեռից դաղդաղ էլանք,
 Քանտուճմ համբերութեան դուժսաղ էլանք,
 Վատարաղդ ամենիցն մենք վաղ էլանք,
 Ոսկի անուն պահեցինք, մաֆրաղ էլանք,
 Քար կու դառնայ, ով մեզի չի ամստում:

Մեր մայրն մեծ շահէն է քաջ անուանի,
 Ո՞նց կուտայ իւր ձագերն անարժանի,
 Տեսնողն զումրութը ձեռին չորանի՝
 Տուողին անէծք կուտայ, ծաղը կանի,
 Քանխիւն մենք տեսնումենք կամ թէ լսում:

Նասիրի ծառի վերէն մեր բաժինն
 Յետու առաջ ցոյց կտայ իրա դինն,
 Լաւ ականց ոչ նորն, այլ թէ հինն,
 Անհաս է մեզ քննելոյ ՚ի վերինն,
 Աղօթենք զիշեր ցերեկ ծոմում, պատում:

Չարէւորն թէ ունենայ մին իլտիեար՝
 Չի թողիլ մեզ հոգայով, շուտ կանի ճար,
 Մայիճն նա պատմում է օրն հազար,
 Մեր յոյսն միայն դու ես, Տէ՛ր բարերար,
 Ամենայն նեղ աղաչողին դու ես լսում:

29

«Ման մաստի շարաբամ» Շէյնի եղանակով.

Ես սիրոյդ հարբած եմ, խելագար է՛ր կասեն ինձի,
 Պատկերիդ տարուածն եմ, զիւհար է՛ր կասեն ինձի,
 Եթէ դու լինիս այլոց կարի պէս վարքումդ հաստատ,
 Սիրահարից մէջ կամքն անկատար է՛ր կասեն ինձի:

Այս ք՞ խփած վէրքը իմ վերես եթէ չի տեսնեն,
 Անհաս կարօտում, տանջվող չարաչար է՛ր կասեն ինձի,

Սէբդէ եթէ որ ես մտանամ քո մտանալոյդ պէս,
Բարեաց դաւաճան, չարեաց բարերար է՞ր կասն ինձի:

Այրիմ մարմինս, ձայնս չի հանեմ անմուտնչ դատին պէս,
Բարքն անհանդիտո, լեզուն անդադար է՞ր կասն ինձի,
Կարծեօք Մայիքէի որ միշտ քեզանով լուսաւոր եմ ես,
Այրն անգիտութեամբ խաւարից խաւար է՞ր կասն ինձի,
Զարկեալն մատող իլնելոյ քեզ չէ սրտի կամիած,
Առանձին ցաւ է, էշսից բէյխաբար է՞ր կասն ինձի:

30

Ս. յօր ի փող, վաղն ի հող.

Զարթիր, թմրեալ իմատութիւն, է՞ր ես մտել տաին փողի,
Սի՛րմէ այլքան քեզ ատելով չի լցուաւ փափաղն փողի:

Փողապաշտ մտրդիանց չեմ ասում, եթէ լսեն կու իտ լանան,
Նորանք այլոց խրատում են՝ չառատանան, չի թուլանան,
Ոմանք պատկերներ են պահում, որ աղօթքից չի ծուլանան,
Ոմանք ՚ի անդի պատկերի՝ պաշտումն մտրհալն փողի:

Մարդ կայ փողն արքայութեան յափապէս նմանացում է,
Իրա փողով չի կշտանում, շահով փող էլ բանացում է,
Առ հասարակ քօլ աշխարհին փողն է հեծել, մանացում է,
Սինն չիայ, որ բարձրանայ, վեր էլիւ շալակն փողի:

Եթէ մին էլ փողոց տանես, մանացունես նորան մենակ,
Զուր տրու շուսից լինի, փալանն մահուելից բարակ,
Իսկոյն նորան կու անտանեն պտուելի պարսն սւանակ՝
Եթէ անանն շալակն է լըքցրած տոսրակն փողի:

Բարձրացումն փառաց ՚ի փառս, ով որ փողապաշտ հա-
րուսա է,

ինչ վախտ օրտ է շարունակում, զիսի էլ ատումն՝ զբ. Ե է,
 Շատ կան անվոյ փիլիսոփայք, ամենն մին ակո կորուստ է.
 Այս փառքն ո՞ւմանից ստացաւ անկրաւ քսան փողի

Աղքատին 'ի տղի օղն լոյ՝ ծաղր են անում, պարայնում են.
 Սուան ճշմարիտ են շինում, ճշմարիտն զըրացնում են,
 Արդար գտնաւ օրաց աչքն՝ փող են տալիս, կուրացնում են,
 Չկայ մին այնպէս առարկայ, որ կուրացնի ակն փողի

Ու մին մարդից ես չեմ լսել փողաւորի բամբասովն,
 Նորանց խայտառակ արարքն մարդկանց մէջ յայտնի սովելն,
 Յայտնի մահապարտ կգտնաս, եթէ ասեա վնասովն,
 Հէնց կիմանաս սրտին կպաւ հոգեառ զնսան փողի:

Ոմանք կասեն իրան չունի, էնդուր է փողն խիտ ատում,
 Փողն ինքը մեղաւոր չէ, մարդանց ձեռնիցն եմ գանդատում,
 Լաւ բարեկամ, փողի համար՝ մէկ մէկու զլուխն են հատում,
 Ինչպէս աղուէս՝ երկու ռոտով ընկել ենք թաղակն փողի:

Աշխարհ բանն ես վերառի, խելքս սե քարին քսեցի,
 Աշխարհն ածական ըստ անուան՝ գոյական փողն տեսցի,
 Աստուած ձեզի հաստացնի, սա էլ նորումն լսեցի,
 Մէկ մարդոյ աչքն ցաւում էր, Քար ասան՝ բամբակն փողի:

Սող զիշերն Ֆլքր են անում՝ արդեօք փողն ո՞ւմն խափեն,
 Եթէ հասկանան փող կայ մէջն՝ երկնքից աստղեր կութափեն,
 Մէկ ծովսում, որ վնաս տեսան՝ երես անկեալ կումրափեն,
 Ու գումն փողով զարգարեն աջ և ահեակն փողի:

Չեմ ասում են հարուստին, որ կայքին կեօրայ փայելումէ,
 Հարուստ կայ որ՝ փող մնխելն նորա համար մեծ օլում է,
 Արժանաւոր հարուստներն իրանց գործքից մահում է,
 Ամեն հոգեւոր բաներում ունի յիշատակն փողի:

Փողն ում որ պատահումէ, չի հարցանում՝ ո՞ւմ տղէն ես,
Գլուխդ դարդակ էլ լինի, շատ խելօքների աղէն ես,
Օրէցօր ինձ կաւելացնես, եթէ իմ ասած գողէն ես,
Էհտիբարի վերարկու ա՛ն ծածկիր ձիգ գտալն փողի:

Ձա՛րկեար, քեզի ո՞վ է յանձնել, որ դու ես վճռում այս դաւն,
Մայի՛քն որ փողասէր չէ՛, ո՞ր ծովու՛մն է նորա նաւն,
Այժմեան մարդիկն խելօք են, կու հասկանան փորիդ ցաւն,
Դանակն ձեռիդ ման ես դամ, չես գտնում դմակն փողի:

ՅԻ

Մարդկանց յուսալն անօգուտ է.

Է՞ր ես դու ինձի խարում, ով անհաստատ յոյս,
Ես չեմ առաջանալ օգնութեամբ մարդկանց,
Որով խղճմտանքս ժամանակ կորոյս
Պտուղն է ճաշակում նա իւր արարմանց:

Ետտ մի՛ հոգալ, տես ո՞վ է քեզ ստեղծել,
Յայտնախօսութեամբ ես անունդ պղծել,
Սովորիր գողանալ, խաբել ու կեղծել,
Որ լինիս սիրելի ազնիւ մեծատանց:

Որտեղ ծածկեալ բան կայ՝ քօլըն բանումես,
Այնու բարբասանաց դատաստանումես,
Իշխանաց յամօթն յանդիմանումես,
Այդպէս բերան ունիս՝ մի՛ պահիր անսանձ:

Աշխարհն քեզ չի տալ ինչ որ ուզես,
Տրիխըդ կու մաշվի, եթէ շատ վազես,
Եթէ ունիս ցանկութիւն աշխարհին սագե՛ս՝
Նոր բնութիւն ճարի՛ր, անցեալն էանց:

Խեղբիցս հեռու է առաին բախտիս,
 Պատճառ, յանդիման է կրահն բախտիս,
 Յայնժամ շիջաւ ճրագն բախտիս,
 Որ ինձի մոռացաւ ազգըն նաջարեանց:

Զարկեար, դու համբերիր, համբերն շահ է,
 Ինչ տեսակ որ ապրես, վերջինն մահ է,
 Մայի՛քի խոստումն աներկբայ պահէ,
 Գուցէ նա լինի քեզ մայր երջանկութեանց:

32

Մարդկութիւնն մարդից ուզիր, անուշ հոտն վարդից ուզիր.

Թէպէտ ամեն ստեղծուածի անունն մարդ հողեղէն է,
 Հողն զանազան տեսակ է՝ մէկ տեսակն ոսկեղէն է:

Անարժան մարդն իշխանութեան եթէ հասնի՝ պատահմունք է,
 Պատճառ, ընդթեամբ տկար է, զարմանք չէ, ազնիւ ցեղէն է:

Մարդուն մարդկութիւն պիտի, որ մարդիքնորան մարդ ասեն
 Սանդալն թէ հոտ չունենայ՝ մին հասարակ վայտեղէն է:

Ոմանք մարդ են աշխարհումն, և ոմանք մարդակիրպարան,
 Մի՞թէ մարդկութեան շնորհքն մուրուքէն է, կամ բեղէն է:

Ճշմարիտ է, որ երբեմն շունիյն զառն է ծնանում.
 Լուսաւորիչն Գրիգոր չ'մարդ Անակի աղեն է:

Դառն պտուղ էլ կուձարուի քաղցրապտուղ բաղումն,
 Գլխին քաղցր չին անուանիլ, ասելով՝ Ֆլան բաղէն է:

Ոմանք ամօթներ շատ ունին, աշխարհն անյայտ է անում,
 Եթէ ես ասեմ, աշխարհից, բայց դուք ասացէք՝ փողէն է:

Զարկեար, Մայի՛քին տեսնումե՞ս, որ կարօտ է աչաց լուսոյ,
 Վարուք, բարուք, բարի անուամբ շատ տեսանողաց աղեն է:

Խրատ հասկացողի համար.

Ինչ բանիցն ահ չի քաշես՝ վերջն նա մին բան կուլինի,
Սղքատն զգաստ կենալով, օրէցօր խափան կուլինի,
Թէ չասեմ լիրբ է աշխարհն՝ բաս արարքն ո՞նց թաղցնեմ,
Յիմարն ոսկի արծաթով առաջի իշխանն կուլինի:

Կռապաշտին չաստուած ունի, փողապաշտին ո՛չինչ չունի,
Փողապաշտի որդիքիցն դառն մութացիան կուլինի,
Եթէ հայրն է որդւոյն ծնող, սա ամենեցուն յայտնի է,
Ուռն ծիրան պտուղ չի տալ, շուն որդի շան կուլինի:

Երեք բան կայ աշխարհումս, լսելն, ու տեսնել, փորձելն,
Ով փորձած մարդկանց հաւատի, գործն գովական կուլինի.
Թէպէտ պատճառներ են բերում, ես ո՛չ մէկին չեմ հաւատիլ.
Եթէ որ խառնուրդ չունենայ, որդին հօրը նման կուլինի:

Քահանայի որդին թուրքանայ, ի՞նչ մեղաւոր է տէրտէրն,
Տէրտէրակիսն սուրբ կենայ, որդին սրբազան կուլինի,
Ամեն մարդոյ արարմունքն է, առակաց բախտ են անուանել,
Բարի գործոց պտուղներից փառաց աստիճան կուլինի:

Ոսկին, երծաթն չի հալես՝ գանազան շէքսեր չի լինիլ,
Ով իրան որդւոյն չի ծնծի, որդին անպիտան կուլինի,
Ով մարդկանց գործին մտիկ տայ, նա կարող է մարդ ճանաչիլ,
Ով մարդկանց կերպին մտիկ տայ, նա պատիւը հան կուլինի:

Ես շատ եմ սիրում Մայիքէն, պատճառ նա խիստ ազգասէր է,
Եթէ դիպի էլ միմեանց սիրեն, էլի Հայաստան կուլինի,
Զարի՛ւտ, եթէ փող աշխատես՝ քիչ պարոն Սէքսհամ կասեն,
Հայ ազգի մէջ բանաստեղծի վերջն անփոխան կուլինի:

Ո՛վ եղկելի բուլբուլ, ո՛վ սիրելի բուլբուլ.

Ի՞նչ անմխիթար լաց ես իլում, շատ քաշումես զար,

Ո՛վ եղկելի բուլբուլ,

Մի՞թեմ սա է վայելչութիւն միշտ ու մեղարար,

Ողորմելի բուլբուլ.

Հէ՞ր գարնանային եղանակին իլնումես անձար,

Ո՛վ սիրելի բուլբուլ.

Դժվար ցուէ, որ սիրականիդ առնումէ մին խար,

Ո՛վ փարելի բուլբուլ.

Ընդէ՞ր ես լինում դու բէյբաֆայ վարդին ումիավար,

Ո՛վ ցանկալի բուլբուլ:

Քեզ պէտքէ ասել էս աշխարհին յայտնի օրինակ,

Էշխից հեռու մանգալ.

Ռչով չի տեսել սիրունների վարքն ատորժակ,

Էլ պէտքը չէ սէր տալ.

Գեղեցիութիւնն մարվաթի հետմիշտ կիլի ներհակ,

Չ'իլնիլ եարը խոշ հալ.

Շատ լսողն ո՞նչ կ'տայ էլ մին եարի իղարար,

Ո՛վ փարելի բուլբուլ:

Դու քեզ համար էն վարդի փուշից ժողովի մին թախտ,

Բալքամ թէ չի ննջես.

Կողմն արեւելեան լուսադէմ կուփչի մին վախտ,

Որ վարդերը փնջես.

Չգա՛ստ կացիր, որ խարն չի դայ քեզ թողի քամբախտ՝

Չարչարվես ու տանջես.

Մեր հայր Ադամին խափող մութն զալու է անյաղթ,
Էշխին չի եօփունջես՝

Հինդ րօպէի քունն քեզի տալիս չէ՛ զադար,
Ո՛վ խղճալի բուլբուլ՝

Վախտ կարդի՛ր ու խնդայ, նորանով եարիդ վախացնես,
Վախտ վարդին աղաչիր՝

Վախտ փետուրներով խաղ արա, որ սիրտ ուրախացնես,
Վախտ սիրիւր ու պաշիր՝

Երբ խարն կուգայ՝ տեսնելուս գոյնդ չի՞ թօխացնես,
Երբէք մի՛ թառաչիր՝

Մանր ուղունկներով տես խարին արին շողախացնես,
Սպանիր ու խաչիր՝

Թող վարդն ասի՛ իմ եարը զօջաղէ սիրահար,
Սարսափելի բուլբուլ՝

Ամեն թարիֆդ Սէրահաֆ սրտին է մին զաղ,
Կամ՝ ցաւն է ցաւիդ պէս՝

Քո ողբի ձէնից փախչումէ, էնդուր չի զալես բաղ,
Որ նորան չի տեսնես՝

Եթէ կարանայիմ քաշելի՛ ցանկանումեմ վաղ
Դարտդ անէիմ կէս՝

Դու մին տարւոյ մէջ երեք ամիսն ես եարի մուշտաղ,
Յետոյ չանես անտես՝

Բայց ինձ ցաւ ունեմ՝ աշուն, դարուն, ձմեռն ու ամառ,
Անպրծնելի բուլբուլ՝

35

Մուխամմազ.

Լոյս ես լուսատու՝ լոյսդ անարժան էլաւ ինձի,
Վարդ ես հոտաւէտ՝ փնջելը բոյրան էլաւ ինձի,

Վայ՛ իմ՝ քաշածին՝ որ բաժին այսքան էլաւ ինձի,
 Խնդալի սէրդ՝ պատիժ զանազան էլաւ ինձի,
 Ո՛չ դու խղճացի՛ր, ոչ այլ օգնական էլաւ ինձի:

Մուրվաթ չկայ՝ քեզանում բակեար, ո՛վ զտուում անաստուած,
 Որ դու ես վառել այս կրակն. ջուր մի վոքք ա՛ծ,
 Իմ սրտի մէջն հազար տեսակ մուսմուս ու կասկած,
 Դու էշխի գինով գիշեր ցերեկ սարխոշ ու հարբած,
 Ի տեղի մութազն՝ յոյսն յօթեան էլաւ ինձի:

Ով տեսնումէ իմ մոլորվելս՝ ցաւս է հարցնում,
 Սիրոս յօժար եմ դարտակելոյ՝ լիզուս չի դարձնում,
 Խղճմանքիցդ հարցըրու՝ թէ ինձ է՞ր է կորցնում,
 Ջարմանք է սիրահարի բանն՝ չի մեռնում պրծնում,
 Կենդանիս դժո՞խք, սա ի՞նչ դատատան էլաւ ինձի:

Ինձի տեսնողն սարսափումէ՝ կարծումէ մեռեալ,
 Լաւ է հոգիս առնես, էլի կրկին կարենաս տալ,
 Ա՛յն դու չ՛լինէիր աշխարհումս, իմ բաժին իղբալ,
 Այլոց տուել ես վայելչութիւն՝ դովլաթ ու կամ մալ,
 Մին եար տուիր ինձ, նա էլ դաւաճան էլաւ ինձի:

Մրրիկ քամոյ պէս՝ ժանտաբեր է ամեն խաբարը,
 Արագ նեախ պէս վէրք է բացում տուած նուբարը,
 Քեզ լաւ չեն ասում, տանջվում է այսքան սիրահարը,
 Ե՛կ նամուս արա՛ դարձիր առաջվան ճանապարհը,
 Երբ ջան ասեցի՛ ցաւն պատասխան էլաւ ինձի:

Դու Ջարկեաբէ պէս չես ճարելու նազի դիմացող,
 Կախքդ կատարող՝ չի կշտանող, համըն իմացող,
 Թո՛ղ Մայիճի մօտ անմահ անուն, նա է մնացող,
 Երբէք չի լինիլ սիրուններից դժոխք գնացող,
 Այս լաւ տեսիլն նորումս այեան էլաւ ինձի:

36

Վ ան ծերութեան.

Խնդրելով չառնելով է՞ր չի բեզարում
Ի՞մ ապառաժ և չամսոց հրեան.

Ջրհորի վերեւից նայողի նման
Երբ աչքն տեսնում է, քաշում է նկն,

Եթէ ինձի լսես՝ դուս մի՛ եկ բուռնէն,
Ել չիայ քեզ բաժին ոչովի տուռնէն,
Ցանկատէր հարսներն քեզ ո՞նց ընդունեն;
Ահա սպիտակիկ ա մուրքիկ շատ կէսն:

Վ աարդ երես եկաւ, պաթմիշաւ լաւրդ,
Ջրկուած հզան նման իզուր է դաւրդ,
Նա ջոկ վախտ էր՝ շուտ շուտ կառնէին ցաւրդ;
Ել չիս կարալ լսել այն շատ յապրէսն:՝

Ճաշրդ կաթնով պիտի կամ թէ խաշխաշի,
Ատամ չուռնես, ձեռ մի՛ ձգիլ լաւաշի,
Պառաւ արջին չի փոխարկիլ նոր կաշի՝
Եթէ մոնացունես լոնդոն, Փարէսն:

Երանի էր այն վախտ, որ կու խօսիր նազով,
Ջահլիլներն կուգային մօտրդ վազով,
Հիմիկ սաղ գիշերդ անցրցուր երազով,
Ինչպէս էն անձնախաբ տունի տընտեսն:

Ս. աւսպիլ բան դուրս գայ ջահլիլ բերանէն,
Աղջկունքն խիստ հազ կանկն այն բանէն,
Բերան կուծուռն, քեզ ծաղր կանկն,
Եթէ դառնաս շնորհալի Ներսէսն:



Պարիէտար, Մայիքն քեզ շատ է խրատում,
 Ավաստ նորա խօսքն դու չես գնահատում,
 Էր ես մենակ քո ձեռնիցդ գանգատում,
 Շատ ես տեսել աշխարհի մէջ քեզի պէսն:

37

Պատահմունք նոր եղանակի.

Կարօտ աչքեր, մի լաւ նայիր, այսօր քեզ արժան են արել,
 Նազելիքն հաւաքվել են, տունդ չըտողն են արել,
 Եշխի գինով, ոչ թէ մինով, հարբածի նման են արել:

Մէկն նստուլ, մէկն նուշ է, որից համ առնես՝ անուշ է.
 Այս վարդերն առանց փուշ է, փնջողքն նշան են արել,
 Համեստ նազող, քաղցր ալազով քեզ որդի մահուան են արել:

Ով որ սորանցից հազ չանի, աշխարհիցն ի՞նչ կու տանի,
 Կեանքն հինգ օր է ինասնի, տեղն գերեզման են արել,
 Անտէր մարդին, անհոտ վարդին տես ինչի նման են արել:

Իչ չեմ ասել ինձ խաբել են, անիմաց նետիւ խփել են,
 Անմեղ արիւնս թափել են, ձեռներն ալվան են արել,
 Նախ քաշելը, յետ մաշելը մին նոր հրաման են արել:

Պարիէտար, քանի ծերանումես, օր ըստ օրէ սերանումես,
 Էն ա որ միշտ բերանումես, Մայիքն դու շման են արել,
 Ուզորդ են ասում, չեն բամբասում, չ'ասես թէ բոյզան են արել:

38

Կայր մին քասիր թխտի անուն, բարեկամաց մէջին նկուն,
 Պատահել էր գառն ապրուստի, կարօտ էր մին նոր հագուստի,
 Ամեն օր կուգնայր ծմակ, ճախ կու բերէր երկու շալակ,
 Այն ճախի փողով էն օրըն անց կու կենայր քաղցած փորն:

Մին օր մէջից տուն էր դալիս, ա'իս էր քաշում, դառն լալիս։
 Սատանան նորան պատահաւ, ճամբի մէջին խօսիլի պահաւ,
 Ասաւ, յով մարդ, է՞ր ես լալիս, ի՞նչու չես իմ մօտս գալիս։
 Ինչ կամենաս ինձնից ուղեր, այս բապէին կանեմ հազիր,
 Ասիլի, երծաթ, ձի կամ տալար՝ կունենաս քեզի անհամար։
 Ա. մ. նից մեծ իշխան կանեմ, վերջումն երկրի խան կանեմ,
 Միայն հետս եզրայրացիր, իմ մատաղատիւն կացիր,
 Պաս մի՛ պահիր, ժամ մի՛ զնայ, քարոզ լսելու մի՛ քնալ,
 Ոչ տունդ մեռնի կ'տանես, ոչ երեսիդ խաչ կըհանես։
 Ծկաին ասաւ՝ յես յօժար եմ, ինչ որ ասես՝ կ'կատարեմ,
 Եթէ լիացնես ինձ փողից, դու լաւ ես իմ ստեղծողից։
 Սատանան վազաւ մին տեսակ, զնաց բերաւ տասն քսակ,
 Ասաւ յոս քեզի փող ձեռաց, առաս մխիթ, ոչ թէ կամաց։
 Յորժամ ինձ կանչես՝ մօտիդ եմ, միամտութեան գօտիդ եմ։
 Երբ որ տեսար պրծաւ փողդ, ճանաչիր քո փող տուողդ։
 Էլի շուտով անյայտ եղաւ. Ծկաին շալակն տեղ թողաւ,
 Ա. յուպէս ուրախ տուն էր գալիս, որ աշխարհն տեղ չէր տալիս։
 Կինն տեսաւ մարդն ուրախ է, քօլ խօսածն աջ ու ձախ է,
 Ասաւ յայ՛ մարդ, ի՞նչ կայ ետքար, չե՞ս պէլացեր խանի խարար,
 Դու չէիր ծիծաղիլ տարով, թէ եկար ուրախ խաբարով,
 Ծկաին ասաւ իւր կնկանը, «ասա ինչ տեսակ է բանը,
 յՍատանի հետ եղբայր էլայ, նոր հարուստութեան մայր էլայ,
 Ինձ տուել ա տասն քսակ, մէջին փողեր տեսակ, տեսակ,
 Հիմիկ ես գնումեմ բազար, առնելու եմ ինչ որ ուզար։»
 Քսակներիցն վեր առաւ, զնաց փողոց պարոն դառաւ,
 Առաւ, ինչ որ հարկաւոր էր, ուտելիքէն, կամ թէ շորեր։
 Վերջապէս հինգ օրվայ վերջին ապականաւ փողի մէջին,
 Քրտամբ չի աշխատած փողն ո՞նց կուխնայի մըսխողըն,
 Էլի կանչաւ սատանային, սատանայն եկաւ արխային,
 Ասաւ, եղբայր, պրծաւ փողն, էլ խարջիլոյ չունեմ վաղն»
 Կրկին տուաւ ինն քսակ, ասաւ գլխիդ շնիր պսակ։

Տունեղէնն պատրաստել էր, բարձեր, լէհեբներ դարսել էր,
 Երբ տունն տեսաւ տան նման, կատաղաւ սպանդի շան նման.
 Հարիւր գլուխ ձի ու ջորի, տավար, գովէշ, ոչխար սիւրի,
 Ամենայն բանիւ լիացաւ, իւր ապրուստին շատ հիւացաւ:
 Ծկտին մի օր իւր մեծ տանն՝ զուգվիլ էր ինչպէս սուլթանն,
 Կանգնաւ պարզ հայելուն դիմաց, հպարտացաւ կամաց կամաց,
 Տեսաւ կարճ է հասակաւն, սխաւ մտածել այս ցաւն:
 Իսկոյն եղբօրն միտ քցաւ, եղբայրն շուտ ներկայացաւ,
 Տեսաւ Ծկտին շատ մթնած է, ունքերն խիտ կախ քցած է,
 Ասաւ «եղբա՛յր, ի՞նչ է ցաւդ, ո՞ւմ հետ է պատահել դաւդ-
 Ծկտին ասաւ, «իմ եղբա՛յրս, քեզ մատաղ հայր ու մայրս,
 Գիտե՞ս քեզնից ինչ եմ ուզում. բոյրս կարճ է, շոր չի սաղում.
 Անյաղթ պիտի մին ճար անես, իմ կարճ բոյրն երկար անես.^ւ
 Սատանան ասաւ, «աի՛րեղի, կարող ես քիչ համբերելի,
 Գիտե՞ս մեր այս երկրի խանն ունի մին լաւ աղջիկ տանն,
 Վաղն դնալու եմ մօտն, կու բռնեմ նորա ձախ ոտն,
 Աղջիկն կուլինի դիւահար, կու տանջեմ նորան չարաչար,
 Դու հմուտ կախարդի նման ե՛կ, կանգնիր խանին յանդիման,
 Ասի՛ր ես այն դիւահարին փրկիչ եմ, յաղթելով չարին:
 Յորժամ եկար աղջկայ մօտ, բանն վերջացո՛ւր կարճառօտ.
 Դուներն ներսիցն փակիր, աղջկան ապտակով թակիր.
 Ես դուս կուգամ նորանիցն, նա կամաչի իրանիցն.
 Դու մեծ պարգևներ կտանաս, ամենի հետ կու դօստանաս,
 Յետոյ մին իւր կտամ քեզի, այն իւղիցն փոքր լըզի,
 Բոյրդ կանի իբրև չինար, տեսնողն կասի բախտավար:
 Սատանան ինչպէս որ ասաւ, վաղն դնաց գործն սկսաւ,
 Պէլացաւ աղջիկն խանի, ով էր կարող դէն հանի:
 Ծկտին լսաւ այս համբաւն, թռչումէր ինչպէս կարաւն:
 Գնաց հասաւ մեծ պալատն, խօսաւ սատանի խրատն,
 Խանին էնպէս յոյս էր տալիս, որ աչքերին լոյս էր տալիս:

Մկտին գնաց աղջկայ մօտն, տեսաւ կապած ձեռն ու ոտն,
 Դռնիրն ներքսեւից փակաւ, ողորմելոյն քացով թակաւ,
 Երկու կողմանց ցաւն յաղթաւ, սրտիցն էլ եղբայրն ձխտաւ.
 Աղջկայ մարմինն սառաւ, հողս գլխին էլաւ, մեռաւ:
 Երբ խանն այս լուրն լսեց, զլուին քանդել սկսեց,
 Կախարդին բերին քաշէ քաշ, մինչե գալն իլաւ հալէմօշ:
 Խանն առաւ, շանպիտան գազան, մի՞թէ քեզմնից մահ ուզան,
 Ինձ թողացիր անգաւակ, բախտս քցար խոր հորի տակ:
 Հրաման տուաւ դահձապետին, շտարէք այս լիրբ շար ագէտին,
 Մին շնարի ծառ սրեցէք, սորա տակիցն խրեցէք,
 Որ հասնի մինչե բողազն, վարդապետի ասաց խոզն.
 Երեսն կեղտով շաղախէք, փայտն փողոցի մէջ թաղէք,
 Մինչե որ շան պէս սատակի, ապա թողէք Ֆէյնի տակի:
 Մէկ փայտ բերին քառսուն կաղի, ջնան սրեցին նման փաղի,
 Ծկտի-բէկին շամփուրեցին, փայտն զհանի մէջ փորեցին,
 Մինչդեռ նա չէր մեռել, սաղ էր, տեսնողին անտուտ ծիծաղէր,
 Սատանան եկաւ փայտի տակ, ձեռին մին երկաթի մահակ,
 Հարս'յ տուաւ, Վեղայր ծկտի, ի՞նչ եղբայր քեզ այդպէս կողտի,
 Ի՞նչպէս ա բոյբղ, սիրելի կարո՞ղ ես ատոյ վեր բերելի.
 Ո՛չ թէ Դարէժ կամ Թէհրանն, պարզ տեսնու՞մն շնգտանն.
 Բոյիզ մտիկ տուր հազ արա, էլ մի գանդաւովիր, տազ արա,
 Կամ մարմնով կորաւ կամ հողուով, այնպէս մնաց Ֆէյնի տակով:
 Շատ կան այժման աշխարհումն, սատանի եղբօր շարումն
 Սուրբ լուսնու որչին մտացող, կամ լոյս օրէնքից հեռացող,
 Երբ սատանան ճարաւ միջոց, քաշելու է մին օր փողոց:
 Քէպէտ խօսքիս ձեն վէպ է, բայց ոմանց գործին հանդէպ է,
 Ինչէս Շամախին Հայարնակ, այժմոյս եղել է խայտառակ.
 Երախայքն անմկրտու թիւն, կամ մեռեալքն անսրբութիւն:
 Ով կարդալ գրեւէ շատ ու քիչ՝ նորան կոչու՞մ են քարոզիչ,
 Գրանցից երգ են յօրինու՞մ, ո՞վ գրեւէ ի՞նչեր են շնու՞մ.

Չեմ ուզում ամենն բացել, կարգողն վաղ է հասկացելը,
 Մայիքին էնդուր եմ սիրում, ամեն տեղ անունն գրում,
 Որ ժառանգ է լուսաւորչե, հաւատացեալ ազգն վրիչի.
 Զա՛րէկաբ, դու ամենից չար ես, բայց քո Ազգին օգտակար ես,
 Ով ոք փոխի իւր հաւատն, կուլինի չարեաց արմատն:

39

Աշխարհի վերայ.

Հերիք ա, իս պահար այսքան ժամանակ,
 Անարուռ, անհայեա, անամօթ աշխարհ,
 Մի՞թէ այլազգիք քեզ մեզը են ուտայրել.
 Մեր ազգն առել ա աղու դահրումար:

Քեզի տեսնեմ սրտիդ ժանտախոց հանեա,
 Ելի չար սե՛րմ ունես մեր մէջին ցանես,
 Սրբեօք մին բան մնա՛ց, որ դու մեզ չանես,
 Նոյնն քեզ նորոգաւ մեր ջանի համար:

Նեղութիւն էր տալիս քեզ քաղաքն Անի,
 Քանդար, մէջքն կտարար սուրբ Հայաստանի,
 Աստուած իրան ձեռօք քո աչքդ հանի,
 Զրկվիս դու լուսիցդ, նստիս միշտ խաւար:

Մի՞թէ երասխումն ինքդ չողացար,
 Գիւակերպ կուռքերից է՞ր չի նեղացար,
 Նամուսն մեր Ազգի մէջից գողացար,
 Ծնար չար, սնար չար, տանջվիս չարաչար:

Նորումս մին քանի ազգաւեր իշխան
 Ռեպի սէր Հայրենեաց աշխատակից կան,
 Ճաքումես տեսնելուս նորանց միարան.
 Միաք ունես այս գործն էլ թողիս անկատար:

Որքան սուրբեր ունիմք մենք քո փորի մէջ,
Խորը քանդիր, ինքդ կուրնկնես հորի մէջ,
Մին օր ձեռս ընկնես մի խոր ձորի մէջ,
Այնքան ծեծ տամ քեզի լինես դիւահար:

Մայիկէ աչքերից լոյսն քաղեցիր,
Դաղվես ինքդ, ինչպէս նորան դաղեցիր,
Աղբղ ճար ասեցին, դու խոր թաղեցիր,
Սատանայն քո հետն անի միշտ մաղար:

Չարիւտարն եթէ որ քեզի չի ճանանչի,
Անուանդ է՞ր պիտի բոզ պառաւ կանչի,
Ի՞նչ ես տուել, որ քեզանից ամանչի,
Շամախի քաղաքից քցել ես օտար:

40

Ստախօս մարդի վերայ.

— Հալած արձիճ պիտի ածել բերանն՝
Ինչ մարդ սովորութիւն ունի ասել սուտ.
Կուզարդարի ինչպէս տաճկաց զուրանն,
Հողուոյ կամ թէ մարմնոյ սուտից ի՞նչ օգուտ:

Խոյ մատաղ խոստանայ, չի մորթիլ մին հաւ,
Միշտ լաւին վատ կասի, կամ թէ վատին լաւ,
Եթէ զատկին ասի «Քրիստոս յարեաւ,»
Ինքն իրան ասածն կու կարծի անտուտ:

Ընկերին չի ասիլ ո՛ր օրն է պան,
Ինչ առնես նորանից՝ հետն է վրան,
Ոմանք կասին ստախօսից մեծ մասն
Գոյնն դեղին կուլինի, աչքերն կապուտ:

Սուտ ասողն չի լինիլ մին հօրից ծնած,
Ուրեմն ծնողքն սուտով են շինած,

Առաւօտ վեր կացաւ երես չի լուացած՝
Գարնանային ցօղն կու շինի կարկուտ:

Սուտ երազ կու տեսնի այլոց անուանի,
Իբր թէ նա ճաշին իրան տուն տանի,
Մինչև 'ի երեկոյ քանի սուտ հանի,
Համարումէ նա օրեկան եկամուտ:

Խոստովանքին ինչ որ հարցնի տէրտէրն,
Կու քաղի մեղքերի մէջից անխէրն,
Օրինակ, Մայիֆէ մեծ սանահէրն
Սուտն կասի, հացաւ երդում կուտի շուտ:

Սուտ ասողին յայտնախօսն է սպանում՝,
Այն բոպէին պատասխանն է ստանում,
Զա՛րչե՛աբ, դու էլ թութի ղուշ ես խոստանում,
Որն որ չունես մին չալ ագռաւի ճուտ:

41

**Գտակ կարող, դու մարդ ճարի՛ր, ապա նստի՛ր
գտակ կարի՛ր.**

Մարդ կայ՝ մարդ է աշխարհումս, մարդ կայ մարդակերպարան է:

Մարդ կայ անզգայ պատկեր է, մարդ կայ ամեն բառն բան է:

Մարդ կայ լաւ խօսալից պաս ա, մարդ կայ մարդկութեան ան-
հաս ա.

Մարդ կայ էշից քիչ պակաս ա, մարդ կայ նորան թարիֆ կանէ:

Մարդ կայ՝ փողով մարդ է դառել, մարդ կայ՝ չունի, վիզն է ծռել,

Մարդ կայ՝ հոգսից սիրտն է սառել, մարդ կայ պատն զառնչան է:

Մարդ կայ սէրից բէյխաբար է, մարդ կայ յատուկ սիրահար է,

Մարդ կայ՝ եարն դարդուսար է, մարդ կայ՝ սէրն անհիման է:

- Մարդ կայ աւագակ՝ պասպահոյ, մարդ կայ սասակեր մարդ շահոյ,
 Մարդ կայ քարոզիչ՝ ազահոյ, մարդ կայ հաղուստից նման է:
- Մարդ կայ տախտը՝ առանց պոզի, մարդ կայ՝ չոր զլուխ կ'խողի,
 Մարդ կայ լավոյ նման խողի, մարդ կայ պատույ անարժան է:
- Մարդ կայ հացի քտ՝ շատ ուտող, մարդ կայ՝ նոր հաղուսան
 ատող,
 Մարդ կայ դտակն կարկատող, մարդ կայ խլճնանքն տան է:
- Մարդ կայ խմաստուն՝ ժանկ չունի, մարդ կայ ժանկ ունի,
 յանկ չունի
 Մարդ կայ անուանը դանկ չունի, մարդ կայ լուրն Հնդստան է:
- Մարդ կայ սնունդն է անտուտի, մարդ կայ վախտուն ամեայ
 քուտակ,
 Մարդ կայ իւր ազգին հակառակ, մարդ կայ հոգւով պար-
 տական է:
- Մարդ կայ՝ վասն մեր մարմնացաւ, մարդ կայ՝ Աստուած էր,
 մարդացաւ,
 Մարդ կայ՝ ընդ աջմէ չոր կացաւ, մարդ կայ՝ սուրբ Սրբոր-
 դութիւն է:
- Մարդ կայ Զարկեաք, ունի Մայիք, մարդ կայ՝ հաղար բերան
 հայիքի,
 Մարդ կայ՝ մարդոյ մին ընծայիւ՝ մարդ կայ՝ շահոյ օգնական է:

42

Մուխամմազ.

Մին զիշիւր քաղցր քնումն տեսայ ինձ մօտ մարդիք եկան,
 Ղաթարով նստան ատնումն, պատրաստեցին շատ լաւ սեղան:

Հարցրի՛ դամէք զուրք ո՞ր սեղէն, ո՞ւմ աղլեցնէք, ո՞ւմ ցեղէն,
 կարծեմ զուրք շատ լի էք փողէն, էդքան բաց էք վարդի նման:

Տեսամ ողջով ուրախ սրտի, չեն պատահած ցաւի, դարտի
Մէկս մէկու ալլահիբրդի՝ խման կենացներ զանազան:

Ասան մենք ենք սիրուն բախտն, չի լինիլ մեր տխուր վախտն,
Շատ յիմարներ կհասնենք թախտն, շատ խելօքներ կանենք անբան:

Լալայովի Բախտն ասաց.

Մինք տեղիցն վեր կացաւ, առիւծի պէս բերան բացաւ,
Միլիօններէց սոհբաթ քցաւ, ասաւ ունէ՞ք բերէք մէյդան:

Ես Լալայովի Բախտն ասաց.

Ես եմ բախտն Լալայովի: Ինձ հետ ոչով չի դալ դովի,
Ոչ դովլաթս կտամ ծովի, ոչ կը տիրեմ ես յախտեան:

Ներուէտովի Բախտն ասաց.

Չկանից պակաս չեմ փողումն, շատն թաղել եմ հողումն,
Կէսն պահած եմ սանդուղումն, օր ըստ օրէ կանեմ նշան:

Կեօկայովի Բախտն ասաց.

Ես լաւ կուտեմ, լաւ կու մաշեմ, նոր ծաղկիլ եմ կանանչումեմ,
Սմեններիդ ճանաչումեմ, Տէրն է միայն ինձ պահապան:

Լալայովի Բախտն ասաց.

Բնաւ պատիւ չեմ աալ փողին, սանդուղներով ոսկի դեղին,
Տէրն ողորմի փող թողնողին, էնքան ունեմ ինձ բաւական:

Կաճկաճովի Բախտն ասաց.

Առաջ ինչի՞ տէր էի, բայց փողի հետ շատ սէր էի,
Ես ձեզ հետ ընկեր էի, թէ եղբայրս չլինէր թուման:

Հարցրի՛ բաս իմ բախտն ո՞ւր է, կարծեմ ապրելս դուր է.
Ասան քո բախտն տխուր է, զիշեր ցերեկ քնած, պիան:

Խնդրեցի որ բախտիս կանչեն, բալքա տեսնեն մերկ՝ ամանչեն,
Մեծ մարդիկներն թո՛ղ ճանանչեն, ամեններն մին քիչ փող տան:

Տեսայ մինն նոր դալիս ա, ձեռին բռնած դարտակ քիսայ,
Ասան հրէս բախտդ էս ա, առանց շապիկ, առանց փոխան:

Ասամ իմ լախտին, քեզի բարով, ի՞նչ ես քնում էսքան տարով,
Ասաւ չի լինիլ էշին գօռով եահար դնես լինի քոհլան:

Ասամ երեսդ պարզ լինի, խորակդ հունձավարզ լինի,
Մինքիչ փող տուր, թող խարջ լինի, բալքայ խարջեմ գնամ Շիրվան:

Ասաւ, կորի՛ր, կորէր պլուտ, փորիդ տակն ա ընկել չիւլդ,
Աստուած կորելայ ուսուլդ, փող չես պահում լինես իշխան:

Ասամ էս դո՛նիցն հեռացի՛ր, մինչ յաւտեան քնած կացիր,
Գնա՛ ինձ շատ մոռացիր, ինձնից բէթար լիւթ ես, իւրեան:

Աբրահամ եմ, խաղ կանչելով բոխձաներ չեմ կապել թելով,
Անփոխան բախտին խնդրելով, պիտի լինեմ քեզի արժան:

43

Մուխամմազ ՚ի վերայ ծածկեալ խորհրդոյ:

Մին ուրախ բիւլբիւլ ունեմ, կարգում է շախ շախ ամեն օր,
Դուրս է դամ վարդի մէջից նա շողաթաթախ ամեն օր,
Ես նորա ձայնի սիրով զուարթ եմ, ուրախ ամեն օր,
Ձովդ ունեմ բաղի մէջին անվախ ու անահ ամեն օր,
Ինձ նման սիրահարի բանն չի գալ ձախ ամեն օր:

Բիւլբիւլիս աչքերը շուխ, ունքերը սև, անեղ տեսակ,
Մագերն մէջքիցը դուս, ամեն ուսին ինն հիւսակ,
Սաղ է դամ կապուտ մոմի, մէջքը նաջիփ, բարձրահասակ,
Այգպէս անփուտ թագուհին ո՞նց չունենայ զլիոյ պսակ,
Չեմ ուզում, որ նա քաշի աշխարհումս ա՛խ ամեն օր:

Բիւրբիւլիս մանգալ ունի, որ բոլոր աշխարքին աժի,
 Համբերութեամբ խօսան՝ թագաւորաց փառքին աժի,
 Հողեղէն ծնունդ գոլով՝ հրեշտակաց շարքին աժի,
 Զուէ յխնն ասեմ սորա հարիւրից մէկ վարքին աժի,
 Ուխտաւորքն անսութիւն չեն գալիս նահալս ամեն օր:

Բիւրբիւլս այս բահարին ինձի ումիտվար է արեւ,
 Թէ գիտեմ աղերսալս նորան փոքր քար է արեւ,
 Հերիք է բաղումանն ինչքան ահուգար է արեւ,
 Չափարից բաղի մէջն ոսոխ ճանապարհ է արեւ,
 Տեանումեմ վարդէն նորից պակսելայ մին թախ ամեն օր:

Զարիւհայ, ի՞նչ ձեռնատուր է վարդի մօտին շատ մնալը,
 Թէ պատահաւ՝ նասիր է, ջա՛հտ արա փունջիլ զնալը,
 Մայիճն խիստ ատում է սէրութեան դուռն բանալը,
 Հերիք ա ինչ քաշումես մինչ փափազդ ստանալը,
 Եթէ միշտ մօտն մնաս՝ քեզի կասի թանթախ ամեն օր:

44

Գովասանք հոգեառ զելֆերի վերայ ասած.

Մի՛ թողիր մէկ մազն պակսի, ինձ համար կեանք է զելֆերդ,
 Նորա վարպետն է ինքնագով, անգովասանք է զելֆերդ:
 Երբեմն այնքան խոնարհ է, ընկնումէ ոտանդ տակըն,
 Երբեմն գլխիդ հաւաքված՝ թագ և պարծանք է զելֆերդ:
 Քննելով նորան օրէ ցօր՝ մարդոյ միտքն մոլորվումէ,
 Թարգմանելոյ հնար չի կայ, ի՞նչ շարադրանք է զելֆերդ:
 Միայն քեզ մօտ եմ մեղաւոր, ո՞ւմանից խնդրեմ թողութիւն,
 Յամենայն ժամ թողես հիւսեմ, ապաշխարանք է զելֆերդ:
 Ո՛չ առնել կուլինիս ո՛չ ծախել, ոչ զինն իմանալ են կարող,
 Կենդանութեամբդ վայելիս, անզին ապրանք է զելֆերդ:
 Արեգական խաւարումն նոր ենք հասկանում ինչով է,

Ձի երկնային հեղինակին յայսնի տանջանք է զիլՖերդ:
 Ինչքան խելագար ենք տեսնում՝ դիւի քեզանից են գանդատում,
 Երբ հողորած դուրս ես գալիս, ո՛հ զարհուրանք է զիլՖերդ:
 Այսքան տարուայ ուխտաւորին՝ ծոցիդ դրախտն ցոյց չի տամ,
 Այսինքն նահախ են ճգնում, կուրուաման վանք է զիլՖերդ:
 Տասն ու հինգ տարեկան վախտին՝ մեղք է նորանց սև հագնելն,
 Ո՞նց հաւատացնեմ Մայիֆէն՝ թէ սուրբ կուսանք է զիլՖերդ:
 Հիւանդին եթէ հոտ կպնի՝ կասեն թէ ցաւն կրկնումէ,
 Զարիւտըն չի տեսնէր՝ լաւ էր, սրտամաշանք է զիլՖերդ:

45

Գնա Մայիլ եմ, եա՛ր, աչքերիդ, սարմատի խումար աչքերիդ)

Սէ՛մ գիտում Ֆիբր անելով ի՞նչ է եարաք չար աչքերիդ
 Անփոխ ջանս Ֆէշքէշ կուտամ նորահաս, նուկրար աչքերիդ,
 Ինչ կիւէր կեանքիս վերէն անիր ըստիար աչքերիդ,
 ու վն ես աշխարհումն, չկայ բարեբար աչքերիդ:

Աչքերիդ մտիկ տալուս՝ էշն ու հաւաս շուռ է գալիս,
 Կշտանալս երբէք չիլում, որ ըստ օրէ դուր է գալիս,
 Թերթեռնք տեսնելուս՝ նետ հրեղին սուր է գալիս,
 Երբեմն լայ իլնելով անմահական ջուր է գալիս,
 Կեահ ուրախ է, կեահ օխուր, չունի էհթիրար աչքերիդ:

Եթէ պատկերահան քո աչքերիդ թահրն քաշի
 Պէտք ա որ հարիւր տարի աշխատելով կեանքն մաշի,
 Տա՛ր նրանց տո՛ւր գառաՖի, ինչ է անում ամեն նաշի,
 Տե՛ս, ինչպէս ջալահիր ա ծանր գինով անթրաշի,
 Զորանայ էնպէս լեզուն, որ նա կասի չար աչքերիդ:

Ովն որ խոշ մտիկ տաս, նորա սրտին շաղ է գալիս,
 Ինձ ամեն մտիկ տալդ հարիւր ջուռա դաղ է գալիս,
 Սուրբերին ոչխար կիլի, քեզի ջան մատաղ է գալիս,

Երանի՛ էն սահաթին, երեսդ ծիծաղ է գալիս,
Կպչում ա երկաթ սէրս անդամանդի քար աչքերիդ:

Աքրահաճն եմ, տեսնելուս հէնց եմ զխուժ ջանլաթս ա,
Ունքերիդ բանդիվան եմ, ինձ բռնելայ, սէյեադս ա,
էն ցաւն, որ ինձ ունեմ, քո աչքերդ իմ դարդս ա,
Սիրտուզանիս փափազս, իմ մաթլարս, մուրադս ա,
Քուզմեմ միշտ ծառայեմ, զուլ իլնեմ խոնարհ աչքերիդ:

46

Մխիթարական նամակ(1)

Մէկ լաւ նայէք վաթսունուչորս նահանջ թուոյ վատ գործերին,
Որ նա խոցաւ անխիղճ բարուք Շամախուոյ Հայ իշխաններին,
Թէպէտ պարտեմք խոտտովանիլ թէ կատարաւ կամքն տերին,
Լացն, կոծն, ավառսայն սրտառուչ է անհամբերին,
Տացէ նորանց հանգիստ հոգւոյ երկնաւոր դատողն վերին:

Ծառն զօրեղ է արմատով, ազդի պարծանքն է իշխանն,
Որոց երկուսն վախճանեցան մեծատոհմ Լալայեանց տանն,
Առաջինն Աթանէս ազան, որ մինչի ցը օր մահուանն
Ազգին սիրեց, օգտեց, ինչպէս Մամիկոնեան քաջ Վարդանն,
Աւա՛ղ, աւա՛ղ, հազար աւաղ սյս իշխանու թեամբ անթերին:

Երբորդն՝ Մարգարէ ազան էր, մին ճրագ ազնուական,
Հանդիստ բարուք, համեստ վարուք իշխանաց մէջ յոյժ զովական,
Աղքատասէր, ողորմասիրտ, խաղաղարար և պատուական,
Գու նահանջ թիւ Վախճանն ու շրջ, սև երես զնաս պարտական,
Որ մէկ տանից երկու առիւծ մատաղ տուիր արծիւներին:

(1) Հանգուցեալ Զարկեարը երբեմն երբեմն դրամական կարօտութեան
մէջ եղած ժամանակ, զիմելիս է եղել այս եւ այն անձներին իրա բանաս-
տեղծական նամակներով եւ բաւականացել: Ահա այն նամակներից մինը, որ,
իմ խնդրանացս համաձայն, ուղարկել է ինձ Շամախուց — Զարկեարի հայրե-
նիքից մեծապատիւ պ. Աղեքսանդր Լալայեանցը: Ա. Գրիգորեանց:

Իշխանաց մահն ազգի համար անբախտութեան դուռն է բանում,
 Ախտս, որ մենք կուրացել եմք, այս պատիժն չենք հասկանում,
 Երբ ընկնում ենք նեղութեան մէջ՝ որդւոյ պէս են մեզ պահպանում,
 Ազգն անիշխան, մարդն անաստուած՝ միւլնոյն է ամեն բանում,
 Սեր Հայ ազգն է միայն ուզող չորանալն պողաբերինս

Հանգուցեալ Աթանէս աղան հոգւով պարտեմք հայր անուանել,
 Որ նա դատաւորաց հեան կեղծելով չէր միարանել,
 Քանի բանդում լինողներն շղթաներն է ոտից հանել,
 Դաւաճանաց աչքին փուշ էր, Աստուած էր նրան հաւանել,
 Ի հարկէ ճշմարտախօսն ընդդէմ է կեղծաւորներին:

Իշխան կայ որ ազգի համար երկրաշարժին ամուր սիւն է,
 Որտեղ աղքատաց նեղացնեն՝ նորան օգնելոյ արթուն է,
 Իշխան կայ որ՝ Յուդայի պէս գործն միայն մատնութիւն է,
 Ամենայն ժամ կաշառակէր դատաւորաց տանն քուն է,
 Առաջինն երկրորդի մօտ՝ նման է զսհուած սուբբերին:

Այս եկեալ զարնան բիւլբիւլն անդադար ապա Վայ կասի,
 Քանզի նորանք արժան էին դատուելոյ իշխանաց դասի,
 Իշխանական շնորհքներն ո՛չ փողի են, ոչ լիբասի,
 Ճակատագիրն էր ցոյց տալիս աղնիւ Աղա Աթանասի,
 Ըստ սուբբ գրոց՝ Աստուած նորան սակեցել էր իւր պատկերինս

Լոյս արեգակդ խաւարուեց, օրդ սեւացաւ, Շամախի,
 Անկաւ քաղաքիդ գերանն, չարն լիացաւ, Շամախի,
 Բնակիչքդ Լուսաւորչի զարն չիմացաւ, Շամախի,
 Մանկունքդ անտէր մնացին, Աստուած բարկացաւ, Շամախի,
 Այստեհետե կհասկանաս լաւն ու վատը, չարն ու բարին

Աստուած մեր հայր Արրահամին բազմացուցանել խոստացաւ,
 Այն օրհնութիւն բերող հողմն՝ նախ Լալայեանց դուռն բացաւ,
 Որով նորանց ազգի մէջին արական սեռն բացմացաւ,

Որդովք, թռամք, հարստութեամբ, զանազան փառօք լիացաւ,
Բարի սերմն բազմանալով՝ լիացոյց բարեբեր տարին:

Այժմն երեք ամուր եղբարք նորանց հաստատուն տեղակալ,
Մեծ իշխան Աբրահամ Աղան եղբայրասեր, խնամակալ,
Բարեհաջակ Գեորգ աղան՝ ժիր զանձապետ և դործակալ,
Նորահաս Կարապետ աղից ո՛վ չէ արդեօք շնորհակար
Սէրն առատութեան նիւթէ ի մէջ եղբարց կամ ընկերին:

Ինչ տուն ունի սէր բնական, այն տունն միշտ հիմնաւոր է,
Անուն բարի, անմահ, անգութ փուչ աշխարհն անցաւոր է,
Վասն որոյ քաջ իշխանաց մահն զգալ հարկաւոր է,
Ամեն բերան ոլորմի տալ կամ ավստսալ պարտաւոր է,
Կենդանին մահ չի հասկանար թէ չի տեսնի անցաւորին:

Մխիթարիչդ ամենայնի, տուր փոխարէնն այս սխրութեանց
Ուրախութիւն տասնապատիկ, ըստ կամաց քոյ անցեալն էանց,
Ոչ պակասի յայսմ հետէ ճիւղ ի տանէն տեարց լալայեանց,
Որպէս հասեր արագ թւօք ի մէջ հրոյն երեք մանկանց,
Որոյ լուրն ուրախութիւն լինի Աբրահամ Զարկեարին:

49

Բաժանումն.

Յետ այսու բարեաւ մնաս, ո՛վ մեծագին ակ սիրական,
Աշխարհն ինձ ասելով՝ թողնումէ մէնակ սիրական,
Տալիս են խիստ ակամայ ջոկութեան բաժակ, սիրական,
Ո՛վ մեզի անէծք տուաւ՝ ընկնենք փոթորակ, սիրական,
Պիտի անյաղթ զիմանամ մի առժամանակ, սիրական,
Որտեղ կայ քաջ սերութիւն՝ չարն է ներհակ, սիրական,
Օրհասին ո՛վ կարող է կանգնիլ հակառակ, սիրական:

Պատահմունք է սիրելն, հաստատ մնալն դժուար է,
Բամբասանքն կտակ է, բայց հասկանալն դժուար է,

Անվայել բարեկամին կեանք բառը տալն դժուար է,
 Անուանդ վատ լսելուս ինձ զխմանալն դժուար է,
 Մոլորված ա'ն քաշելով Ֆիլքը ու խիալն դժուար է,
 Պահելն սրտամաշա՞ք, թողնելի գնալն դժուար է,
 Քաշողն կու հասկանայ ջոկութեան կրակի, սիրական:

Անսասան սէր պահողն այլոց հետն սէր չունենալի,
 Սրբակաց աղաւնեյ պէս չի փորձած՝ ընկիր չունենալի
 Հաւատարիմ՝ ծառային կրկու իշխող աէր չունենալի,
 Կեղծելով կեանք վարողն՝ բնական պատկեր չունենալի,
 Անուշահոտ ծաղիկն՝ կրկու ըրանդ թէր չունենալի,
 Ուրացող սիրականն վերջի օրուան խէր չունենալի,
 Արարմունքն կու մնայ աշխարհին առակի, սիրական:

Դու նախ կեանք կու մաշես, մին ինձ նմանն չես ճարիլ,
 Պարզ անուն կորցնելով միշտ միաբանն չես ճարիլ,
 Իմ սիրոյս պէս մշտակաց՝ քո սրտի տանն չես ճարիլ,
 Կ'ափսոսես այն ժամանակ, այժմեան նշանն չես ճարիլ,
 Յանկացող շատ կու ճարես, քեզի արժանն չես ճարիլ,
 Հանդիսախոս վերայ գայով: էլ իմ տապանն չես ճարիլ,
 Կու պատմես ասածներս այլոց օրինակի, սիրական:

Թողնելն ինձ մուռմուռ է, համբերելն անհնար է,
 Այս առարկին մին վճիռ չեմ՝ ճարում, միտքս տկար է,
 Ինձ ասէք, Աստուած սիրէք, ո՞րն բարի ո՞րն չար է,
 Հողածին մարդ չի քաշած, թիւ վերացս անհամար է,
 Նիւ թն ինքնին մահադեղ, հոտն կասես սուսամբար է,
 Վերջապէս այսուհետեւ ինչ որնեմ, անկատար է,
 Լող տալով ի՞նչ օգուտ է, թէ ծոփն է անտակ, սիրական:

Իմ սէրն անդադար էր, թէ վարքդ առատ չի լինէր,
 Իղձն այսքան չէ՛ր աճիլ համբերն արմատ չի լինէր,
 Սխալմունք չէր պատահիլ՝ ցանկացողքդ շատ չի լինէր,
 Թէպէ՞ս մեր քաղցր սիրոյ վերջը պիտէր վատ չի լինէր,
 Լուրն անյայտ կու մնար, գործիք համեմատ չի լինէր,

Իմաստնոց առականն մեզ եթէ խրատ չի լինէր,
Վաղուց ինձ մորթել էիր անսուր, անդանակ, սիրական:

Լալով ինձի չես խաբիլ, կանանց խորամանկութիւն է,
Փակչեղն մարդախափէն՝ Աստուածային փրկութիւն է,
Ձեզ հաւատ ընծայելն ո՞վ չի ասիլ մանկութիւն է,
Մէկ սիրով վերջանայն՝ մարմնոյ յիմար ցանկութիւն է,
Երկու լեզուանի եարն՝ աշխարհաւեր բարկութիւն է,
Հեշտասէր բարեկամի անունն անյարգութիւն է,
Ո՞նց կարէ խոցուած լեզուն խօսալ համարձակ, սիրական:

Չարիւեարն քեզ պէս սիրունների հազարն տեսած է,
Աշխարհն պտոյտ զալով, նահլաթի քարն տեսած է,
Ով զեղեցիկին հաւատի, նա իւր պաշարն տեսած է,
Կուսանաց վանք է մտած, էլի զարարն տեսած է,
Այս կակուղ առուտուն միսրի բազարն տեսած է,
Անրանի տեղ փշանոց, կամ խեղազարն տեսած է,
Արժան է խօսածներն համարել կտակ, սիրական:

48

Ա.ռ նամակն ասացեալ.

Նամակ, իմ բարեաւս տա՛ր սիրականիս,
Աղաչելո՛վ, ցաւն առնելո՛վ, սիրելո՛վ.
Ասի՛ր վճիռն տայ իմ զատաստանիս,
Խնայելո՛վ, ողորմելո՛վ, ներելո՛վ:

Նամակ, եարիս ասիր չար մարդկանց սեռն
Հաւատ չի ընծայի, ծնել է նեռն,
Թո՛ղ գայ իմ պատանս առնի ձեռն,
Ափսոսալո՛վ արտոսուելո՛վ, կարելո՛վ:

Մա՛մակ, պատմի՛ր եարիս քո տեսած օրս,
 Իմ այս չարչարանք ու նեղութիւններս,
 Մարմնոյս մէջին ծածուկ հալվաւ ոսկորս,
 Համբերելո՛վ, դիմանալո՛վ, լռելով:

Մա՛մակ, դու էլ արդեօք կարօ՞ղ ես ինձ պէս
 Լերթակեր ցաւերս ըստ կարգին պատմես,
 Պատճառն ի՞նչ է, մէկ լուր չեմ ստանում,
 Սպասելո՛վ, հարցանելո՛վ, գրելո՛վ:

Մա՛մակ, ես Զարկեալն եմ, կեանքս ծախսեցի
 Անունս Աբրահամ բուն Շամսխեցի,
 Մայիճին մարդ տեսայ, էլ չեմ փոխեցի,
 Միշտ գովելո՛վ յօրինելո՛վ, շարելո՛վ:

49

«Կէթ դօլանդինան» Շէյնի Նարա-
 թի եղանակով:

Նազդ քաշելոյ հայ չունեմ թէպէտ,
 Բայց առանց քեզ էլ չեմ կարող մնալ
 Խոստանամ հոգիս տալ չունեմ թէպէտ,
 Հոգին այլոց է, ինձ կասեն՝ մի՛ տալ:

Մօտենամ քեզի, բռնեմ՝ կռներդ,
 Թաղնեմ մինչի մահ ումիտս հասած,
 Երբ ցանկայ հոգիս առնի իւր տէրն,
 Թ՛ող դայ ինձ ճարի մէջքդ խաղտած:

Վարքդ նազով է ինձ համար միայն,
 Ինչպէս դահիճ է վարդը բիւլբուլին,
 Իմ յոյսն դու ես, աշխարհն է ունայն,
 Այդպէս չեն անիլ դռնապան դուլին:

Քանի քո սիրոյն զմայլող չի կայր՝
 Նախ ես խնայամ, որ խիստ համեղ է,
 ես չի յայսնէիմ ո՞վ մտոյ կուգայր,
 Այլոց աղափէջ ինձ մահադեղ է:

Ի՞նչ էիր առաջ, այժմն ի՞նչ էլար,
 Դու չես քեզ արել պատուոյ արժանի,
 ես քեզ դովերով միշտ և անդադար՝
 Հասար 'ի փառաց այս աստիճանի:

Մէջքդ բռնելուս ինձի տան թրով,
 Յատուկ հաւատի՛ր ցաւ չի հասկանամ,
 Մաս մաս կտորես ինքդ ինձ սրով,
 Կարծիք չունենաս բերանս բանամ:

Այսօր Մայիֆն՝ ձայնդ լսելով՝
 Խիստ ցանկանու մեր ինձ նման լինիլ:
 Խեղճ Չարէեարչ միշտ հետդ խօսելով՝
 Չի կարաց քեզի սիրական լինիլ:

50

Անի քաղաքի վերայ.

Շքեղաշուք մայրաքաղաք Անի եմ,
 Գորովագու թ ծնող Հայաստանի եմ,
 Չասէք թէ այս վիճակին արժանի եմ,
 Անբաղդացած ես ըստ հրամանի եմ,
 Յետ ու առաջ ես որդւոցս պիտանի եմ,
 Ինձ օգնեցէ՛ք, առանց օգնականի եմ,
 Ընկերաց մէջ նման մութացիանի եմ,
 Բազմազաւակ հայրս աննշանի եմ:

Գոյցէ թէ այսպէս կամեցաւ իմ տէրն,
 Չարեաց քամին անյայտ արաւ մեր սէրն,

Ո՞նց դիմանար ստեղծողի համբերն,
Սուրբ ճաշակից դաշինք զրող աերտերն
Ինքն ուրացաւ Քրիստոսի պատուէրն,
Ձեռէս զնաց լոյս հաւատի ստուերն,
Ո՛հ կուրուսի ինքնակալ կայսերներն,
Անբանից տուն, անասնոց ընդանի եմ՝:

Գլուրեալ եմ՝ աշխարհի ապտակիցն,
Զեմ՝ պրծնում՝ ազդի մեղաց տակիցն,
Հարցրէք ահվալս լուսնակիցն՝
Թէ ի՞նչ քաշամ անիծեալ վասակիցն,
Հայրասպան անհաւատ Արշակիցն,
Գանդաա ունիմ՝ քանի չար մշակիցն,
Ի՞նչ կուծնէր չարութեան վիճակիցն,
Ազգի ձեռամբ նման մարդասպանի եմ՝:

Է՞ր չի հասնում ձայնս լալոյ Հայերին,
Արդէն ժամէ ողջոյն տալոյ Հայերին,
Ահա՛ յայտնի օր սգալոյ Հայերին,
Ճամիէն ահ է մօտս գալոյ Հայերին,
Նոր ուխտ ունիմ՝ բաց խնդալոյ Հայերին,
Ազատ բառն հասկանալոյ Հայերին,
Արձակման դուռն բանալոյ Հայերին,
Որ աւերակ կոխան Յունաստանի եմ՝:

Չեա մի՛ քաշէք ձեր անդին կորուստիցն,¹
Մահ է բարի աննամուս ասորուստիցն,
Ազատ աղքատն՝ ծառայ հարուստիցն,
Եղբօր թշնամին լաւ է այլ դօստիցն,
Բախտաւոր է զօրեղն նուաստիցն,
Դո՛ւրս եկէք ծուլութեան առագաստիցն,
Լաւ է իմաստունն անիմաստիցն,
Ես ձեզ նշան մեծ ազնուականի եմ՝:

Աղբասիրութիւնն մին այնպէս ծառ է,
 որ նորա պտղի համն անըսպառ է,
 ինչ ազգի մէջ սիրոյ ճրագն վառ է՝
 նա անուամբ 'ի մէջ աշխարհի պայծառ է.
 Անտէր ազգն ամեն բանիւ թշուառ է,
 եթէ քննէք Անի տառն ինչ տառ է.
 Կաւն սուրբ է, քարն մաքուր, մարմառ է,
 Հարուստ այգիս կարօտ այգեպանի եմ:

Ո՛վ Հայ կանայք, ո՛ր ժամանակ ողբ ասէք,
 Խեղճ Անիիս ողբազլուխ ըսկըսէք,
 Գոնէ դուք իմ աղերսանացըս լսէք,
 Հայ մարդկանց դտակ ծածկելն բաւրասէք,
 Ի՞նչ փառաց հասցրուց ազգն ինձ, տեսէ՛ք
 Աստուած աղաչէք, օրհասին ըսպասէ՛ք,
 Արժանանաք իմ հողին երես քսէ՛ք,
 Ես տապան քաջ սրբոց գերեզմանի եմ:

Հայի՛ր, զլուէ՛ք հիմիկ որքան տարի է,
 Եղո՛ւկ, Անին աչքը ձանապարհի է,
 Եթէ զարթնէ՛ք՝ ողորմութեան շարի է,
 Այս նոր սերմն պտղատու է, բարի է,
 Ծաղկանց հոտից խիստ նման բահարի է,
 Ո՛վ յոյս ունի՛ նորա դործն արի է,
 Զարկեալք Մայի՛քն ու միտվարի է,
 Որ չիմ՝ մեռած, Անի եմ, կենդանի եմ:

ՅԻ

Պարսկաստանցի Դաւիթ-Խանի կենակցի գա-
 լստեան շորհաւորելն.

Ենորհաւոր ձեր գալուստն, ո՛վ հրեշտակաւարք Խանուհի,
 Խնդրեմք ներել 'ի սուրբ սրտէ ինձ նուաստիս, ո՛վ Խանուհի:

Երբ Դուք հասարակ մեր քաղաքն՝ խաւար աստղն անդունդն իջաւ,
 Զօհալն ուխտանայ չասաւ, անբախտացաւ, լոյսն շիջաւ,
 Եղև մեզի կրկնագարուն, ազգասիրութեան սերմն աճաւ,
 Մոլորականք սուր վի՛ր առաճ՝ լուսինն բերին դահլիճաւ,
 Երկնքիցն ձայն էր դալիս, սոնդծողիդ փառք, Խանուհի:

Մնաճ, սնաճ բախտի ծոցին քո ամուսնոյ այս վիճակն,
 Դու ես անթմբութեան զինի, նա է քո արժան բոժակն,
 Քո սիրով նա միշտ ուրախ է, նայելով աջն ու ահակն,
 Փառաւորեալ հինգ կայսերէ, դու ես վեցերորդ տեսակն,
 Ի՛նչ որ էր ձեր զուգման օրն, ցո՛յց տուեց հնարք, Խանուհի:

Քո տեսակի անսխալ կզն՝ չէր մանկեաճ մեր սարումն,
 Սրբախնդաղ հարս աննման չէլմք տեսաճ մեր դարումն.
 Չար աչքն քեզ ախտոտում է, տանջվում է չարն չարումն,
 Մայիսն քեզ հիւրընկալ էր, ազատար ճանապարհումն,
 Սյժմն յունիս է ցոյց տալիս անսխալ արարք, Խանուհի:

Կամ երազ է, կամ տեսիլ է, կամ ազգասիրութեան նշան,
 Կամ պատահմունք է բախտաւոր, որ մեզ պատահաւ անսխալման,
 Այսպէս Խանուհիք միշտ պահես ազգի համար, Աստուած աման,
 Ու սեւալ բարի վարժարանի, եղեալ ընդ հոգւոյն միաբան,
 Գուցէ ցոյց տան մեզ օրինակ ձեզ նման օտարք, Խանուհի:

Անթերի Հայ Դաւիթ-Խանն, եղո՛ւկ, ազգին հայր սիրելի,
 Զհանդուրժեաց անտես առնել, ձգել մեզ ընդ վայր սիրելի
 Դու լուսոյ ծնունդ Խանուհիդ Հայաստանի մայր սիրելի,
 Իշխան Մովսէս Զօհրաբեանցը Ձեզ բարի եզրայր սիրելի
 Զարչեաքն Մայիճի խնդրանօք խօսեց բանի շարք, Խանուհի

Գեղեցկութեան անհաստատ լինելն.

Շատ մի՛ հպարտացիր, Անթառամ խանում,
Ինչո՞ւ ես պատկերիդ վերէն զարմանում,
Շատերն են քեզի պէս եղել մէյրանում,
Հիմիկ տան քիւնջումն բամբակ են մանում:

Երբ կենաց մջ քառասուն տարիդ լրացաւ,
Գեղեցկու թեան ծովից առուդ չորացաւ,
Յանկու թեան տեղ՝ զուցէ տեաննս փորացաւ,
Իբրև անգամայժ՝ կապրես եօրդանում:

Միտդ կընկնի իմ քեզ սիրով պաշին,
Քո նազով վարվին, իմ աղաչին,
Գլուխդ կու բռնի անէծ, ոջիլն,
Կերակուրդ կտան մին ջոկ ամանում:

Հաղիդ մնշուած կապէն, չադրա հալան
Չի թողիլ զինջանաս առամնացան,
Ստանից զէշ կուլինի կանանց պառանէն,
Գժոխքի զոնապահ ապրող զիւլխանում:

Արև տեղերումն դու վերջընթռնած,
Տակիդ հասիրի կտոր, մին քարի կոնած,
Մանր երեխայքն չորս կողմէ բոնած,
Կասին, պա՛ռաւ, մի՛թէ օյին ես հանում:

Չարկէարի խօսքերն մտումդ պահիր,
Այժմեան մարգարէ է նա, ո՛չ թէ շահիր,
Մի՛ լսիր Մայիքէն, շատ սրտեր շահիր,
Առաւել աշխարհից ո՛ւրնէ չես տալում:

Երբ օլի, բահար խունչալանուբ յարեանա, Գիւլար.¹⁾
 Բիւրիւլ հաւասուննան գոլանուբ մաստանա, Գիւլար,
 Գաֆար սանի կեօրայ՝ եթիշուբ իմանա, գիւլար,
 Քութի՞ մի գէլիմ՝ ման սանի, եօխսս սօնա, Գիւլար,
 Օլիքուբմա մանի, բա՛թմա բու նահալս զանա, Գիւլար:

Եւիս կեօղարու վայ չաքիվիտի զուղրաթ օղի սուբմայ,
 Յուսնուն գաքաթին զայ էլիուբ՝ նաշիայ վե՛րմայ,
 Չաքսուն խաջալաթ զո՛ ջմաղա զաղղուն շալի թիւրմայ,
 Բոյ բաստատի, գիլիֆ դաստատի սաչ յարեանայ յօրմայ,
 Կե՛օր խալղի եզդան նա՛ վերուբ ինսանայ. Գիւլար:

Ղօյնունդա օլան ջաննաթ իրիզվանայ եթիշմազ,
 Շէհտուն ամմիան գին իլայ իմանայ եթիշմազ,
 Յարքաս ջանինի զօյմասայ՝ ջանանայ եթիշմազ,
 Մարիաֆանն²⁾ օլան հուրի մուսուլմանայ եթիշմազ,
 Էրմանի ուչուն գօղուփտի Մարիամ անա, Գիւլար:

Նազ էլլամալի սանդայ բիր աղաթ բիլիրամ ման,
 Կեա՛լ քուսմայ ջաննան, զօլար զիամաթ, բիլիրամ ման,
 Բիլլահ թի, սանուն զօյնու վի ջաննաթ բիլիրամ ման,
 Ուղրաղայ օլան ջաննաթի զայմաթ բիլիրամ ման,
 Ջաննաթտայ թափըմազ բելայ խալվաթ խանա, Գիւլար:

Չարիէար սանայ զուբբան, ծնուն Աղասինի սախլա՛,
 Դօսալն շա՛ղ էլլայ, զո՛ շմանինին հասինի սախլա՛,
 Չօի գէլլայ կիալուր, սան ծնուն հափասինի սախլա՛,
 Իխլաքեար օլան քիմասնուն իխլասինի սախլա՛,
 Մոյշո՛ղար լէինդայ օլուսան մարդանա, Գիւլար:

1) Գիւլարը Հրէուհու անուն է, որին, ինչպէս ասուինն, ծանօթ է եղել Ջարկեարի Հայ բարեբարներից մէկը, որին ինքը — Ջարկեարը, սովորաբար Աղա կոչելիս է եղել: (2 Մարիամը Գիւլարի մայրն է: Ա. Գրիգորեանց:

Աւաղ հայաստան, շքեղ բուրաստան.

Ո՛վ Հայրենական այգի բազմասեր,
Մինչ ե՞րբ ամլանաս, ծաղկիս ո՛չ ընդէ՞ր.
Ժամն եհաս լինիլ մեզ քաջ Հայրենասեր,
Արդեօք մեք տեսանե՞մք զքեզ պողարեր:

Սառուցեալ ազգին մեր մերձ է ամառն,
Ճաշակել զքաղցր, մոռանալ դառն,
Երևեցան հովիւք, ուր'ախ լեր, դա՛ռն,
Կակղեաց Հայկազեան մեծաշուք ծառն:

Ի ձեռն իշխանաց անսեր դաւաճան՝
Ձրկեալ եմք Հայրենեաց, եղեալ ցիր ու ցան,
Ի ձեռն իշխանաց այժմեան միաբան՝
Մնամք յայսմ հետէ եղբարք անասան:

Ուրախացին հանդիսօք սուրբ նահատակաց,
Որո՞ւքն վասակեան մեկնեցան ՚ի բաց,
Թէպէտ յոյժ տանջեցաք վասն մեր մեղաց,
Փրկիչն ամենից եհաս և օգնեաց:

Հայաստան, Հայաստան, ով սուրբ Հայաստան,
